

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԿԵԴՐՈՆԸ

ԳԱՀԻՐԷ - 2017

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՆՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԸ

ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԿԵԴՐՈՆԸ

ԳԱՀԻՐԷ - 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ	7
ՄՈՒՏՔ	11
ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ	12
ԳԱՀԻՐԷԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՆԱՄԱԿԸ	13
ԿԵԴՐՈՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ	15
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ ՆԱՄԱԿԸ	17
ԵԱՀ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԲՈՐ ՅՈՒՇԱԳԻՐԸ	20
ՆՇՈՒՄՆԵՐ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐՈՒ ԹԻԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ	27
ՀՀ ԴԵՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԳԻՐԸ ԳԱՀԻՐԷԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ	34
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ	43
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԱՍԻՆ	44
ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԲԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԿԵԴՐՈՆԷՆ ՆԵՐՍ	48

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ճանաչուած եգիպտահայ մտաւորական, ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի պատուոյ ատենապետ Պերճ Թէրզեանի սոյն գրքոյկի հրատարակումը, պատահաբար թէ միտումնաւոր գուգադիպում է Հայաստանի Հանրապետութեան եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման 25-ամեայ յոբելեանին: Ակամայ միտքս է գալիս այն իրողութիւնը, որ 2012թ լոյս տեսած նոյն հեղինակի «ՀՀ Եգիպտոսի Դեսպանատան Ծննդոցը» նշանաւորում էր այդ յարաբերութիւնների 20-րդ տարեդարձը: Եթէ «Ծննդոցը» պատմում էր այդ յարաբերութիւնների սկզբնաւորման մասին, ապա Պերճ Թէրզեանի նոր՝ «Գահիրէի Համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղորոնը» գրքոյկի առարկան արդէն այդ յարաբերութիւնների անմիջական արգասիքը հանդիսացող Հայագիտական Ուսումնասիրութիւնների Կենտրոնն է: Այսպիսով՝ ընթերցողի առջեւ է դրւում միեւնոյն շղթայի օրգանական մաս կազմող յաջորդական օղակը:

Հայագիտական Ուսումնասիրութիւնների Կենտրոնի ստեղծումը Մերձաւոր Արեւելքի խոշորագոյն եւ ամենահեղինակաւոր գիտակրթական հաստատութիւններից մէկում՝ Գահիրէի Համալսարանում, կարեւոր իրադարձութիւն էր մի քանի առումներով:

Նախ՝ առաջին անգամ որեւէ արաբական երկրում հիմք էր դրւում այնպիսի հայագիտական հաստատութեան, որի գլխաւոր նպատակը ոչ թէ պարզապէս սփիւռքահայութեան ինքնութեան պահպանման խնդիրներին ծառայելն էր, այլ՝ Հայոց լեզուի, պատմութեան, մշակոյթի, գրականութեան տարածումը եւ հանրահռչակումը եգիպտացի ուսանողների, դասախօսների, մտաւորականների եւ լայն հասարակութեան շրջանակներում: Անուրանալի է նաեւ Կենտրոնի ներդրումը եգիպտացիներին Հայոց ցեղասպանութեան մասին ճշմարտութեանը հասու դարձնելու գործին:

Երկրորդ՝ մինչև Կենտրոնի կեանքի կոչուելը Եգիպտոսի գիտակրթական համակարգում չկար որեւէ օղակ, որը մասնագիտացուած լինէր այդ երկրի, ինչպէս նաեւ այլ արաբական երկրների հանրային, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքում հայերի ունեցած նշանակալից աւանդի գիտական հետազոտութեան մէջ: Մի հանգամանք, որը կարելոր է ոչ միայն հայկական սփիւռքի, այլեւ բուն Եգիպտոսի եւ մերձաւորարեւելեան տարածաշրջանի պատմութեան այն տարբեր ժամանակաշրջանների համակողմանի ուսումնասիրութեան համար, երբ յատկապէս ազդեցիկ էր հայկական գործօնը: Անշուշտ, հրապարակում ժամանակ առ ժամանակ յայտնուել են արժէքաւոր գիտահետազոտական աշխատութիւններ յատկապէս եգիպտահայերի դերակատարութեան մասին, սակայն բացակայել է դրա համակարգուած ուսումնասիրման, ինչպէս նաեւ հայագիտական գիտելիքներով օժտուած մասնագէտների պատրաստման հնարաւորութիւնը, ինչն անհրաժեշտ պայման է տուեալ ոլորտում լիարժէք գիտական մակարդակ ապահովելու համար: Այս ուղղութեամբ Կենտրոնը դեռեւս շատ անելիքներ ունի: Եգիպտացի հայագէտների պատրաստումը, ցաւօք, շարունակում է մնալ չլուծուած հրատապ խնդիր:

Երրորդ՝ Կենտրոնի բացումը զօրաւոր խթան էր հայ-եգիպտական եւ ընդհանրապէս հայ-արաբական գիտա-կրթական եւ մշակութային կապերի ամրապնդման եւ զարգացման համար: Գործունէութեան համեմատաբար կարճ ժամանակահատուածում Կենտրոնը դարձաւ Հայաստանի եւ Եգիպտոսի միջեւ հումանիտար ոլորտում համագործակցութեան ամենայաջողուած էջերից մէկը, հասցրեց վերածուել հայ-եգիպտական բարեկամութեան իւրայատուկ խորհրդանիշի: Այն կարողացաւ իր շուրջը համախմբել համամարդկային արժէքներ դաւանող հայերի եւ եգիպտացիների. մարդկանց, ովքեր հաւատում են տարբեր քաղաքակրթութիւնների միջեւ երկխօսութեան անհրաժեշտութեանը, ում համար պարապ խօսքեր չեն բարեկամութիւնը, եղբայրութիւնը, մարդասիրութիւնը:

Չորրորդ՝ այն նշանակալից ձեռքբերում էր Հայաստան-Սփիւռք համագործակցութեան տեսանկիւնից: Կենտրոնի ստեղծումը, ինչպէս յստակօրէն պարզաբանում է գրքոյկի հեղինակը, եգիպտահայութեան եւ Գահիրէում ՀՀ դեսպանութեան ջանքերի համատեղման արդիւնքն էր: Իհարկէ, այստեղ արժանին պէտք է մատուցել նաեւ Եգիպտոսի

պետական իրաւասու մարմիններին, առանց որոնց դրական վերաբերմունքի, համաձայնութեան եւ օժանդակութեան հնարաւոր չէր լինի պետական համալսարանի կառուցուածքում որեւէ նոր ստորաբաժանման աւելացումը: Այդ իրաւասու մարմինների մօտ նման հայագիտական միաւորի գոյութեան նպատակայարմարութեան շուրջ համոզմունք ձեւաւորելն ինքնին դիւրին գործ չէր: Այն տեւական եւ նպատակաւաց աշխատանք պահանջող գործընթաց էր, որ սկսեց եւ անհրաժեշտ հանգրուանին հասցրեց Եգիպտոսում Հայաստանի առաջին դեսպան, այժմ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանը՝ թիկունքին ունենալով եգիպտահայութեան աջակցութիւնը: Յաջորդ դեսպանները եւ դիւանագետները՝ շարունակելով սերտօրէն համագործակցել Գահիրէի Ազգային Առաջնորդարանի, ՀԲԸՄ-ի Եգիպտոսի կառոյցների եւ մի շարք նուիրեալ եգիպտահայ անհատների հետ, բաղձալի հանգուցալուծմանը հասցրին Գահիրէի Համալսարանի Բանասիրական Ֆակուլտետի կազմում Կենտրոնի ստեղծման գործընթացը, միասնաբար ապահովեցին նրա տասնամեայ բեղմնաւոր գործունէութիւնը եւ յաջողութեամբ յաղթահարեցին ծագած ճգնաժամային իրավիճակները:

Այսօր էլ դեսպանութեան եւ եգիպտահայերի ջանքերի համադրումը շարունակում է վճռորոշ դեր կատարել Կենտրոնի գոյատեւման եւ նրա առջեւ ծառացած խնդիրների լուծման գործում: Թէեւ Կենտրոնն իր անցած պատկառելի ուղիով վաղուց ի վեր ապացուցել է գոյութիւն ունենալու իրաւունքը, այն ներկայումս յայտնուել է մի հանգրուանի առջեւ, երբ նրա գործունէութեան արդիւնաւէտութիւնը յետագայում եւս պահպանելու եւ լճացումից խուսափելու համար հրատապ է դարձել որոշակի բարեփոխումների մշակումը եւ իրագործումը: Թէ՛ դեսպանութիւնը, թէ՛ հայ համայնքը եւ թէ՛ Կենտրոնի եգիպտացի բարեկամներն այս ուղղութեամբ միասնաբար լուրջ աշխատանք կատարելու կարիք ունեն: Այստեղ յաջողութեան հասնելու համար էական դեր կարող է կատարել նաեւ Հայաստանի ակադեմիական շրջանակների եւ առաջատար գիտա-կրթական հաստատութիւնների ակտիւ ներգրաւումը: Մաղթում ենք եւ հաւատում, որ Կենտրոնը յաջողութեամբ կը յաղթահարի նաեւ այս փորձաշրջանը:

Արմէն Մելքոնեան
Եգիպտոսում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընթերցողին ուշադրության կ ուզենք յանձնել որ Գահիրեի Համալսարանին մէջ հայագիտական կառոյց մը ունենալու համար նկատի առնուած էր հայկական ամպիոնի մը հիմնադրութիւնը, որ նախ պիտի սկսէր գործել որպէս այլ ամպիոնի մը կից բաժին, և հետզհետէ զարգանալով վերածուէր անկախ ամպիոնի մը:

Սակայն յետագային գործնական պատճառներով յարմար դատուեցաւ որ հայագիտական ամպիոնի մը փոխարէն հիմնուի հայագիտական կեդրոն մը:

Հետեւաբար, գրքոյկին մէջ գործածուած *ամպիոն*, *բաժին* կամ այլ նման բառեր արդիւնք են Կեդրոնի հաստատման հոլովոյթին առաջին շրջանին գոյութիւն ունեցող պատկերացումին:

Հարկ է նաեւ դիտել տալ, թէ գործածած ենք *ֆակուլտետի* փոխարէն *բաժանմունք*, *ռեկտորի* փոխարէն՝ *նախագահ*, իսկ *տեկանի* փոխարէն՝ *մնօրէն* բառերը:

ՄՈՒՏՔ

Ներկայ գրառումին նպատակն է ուրուագծել Գահիրեի Համալսարանին մեջ հայագիտական ուսումնասիրություններու բաժին մը ստեղծելու կապակցութեամբ ՀՀ Գահիրեի դեսպանութեան և եգիպտահայ համայնքին (Գահիրեի Ազգային Առաջնորդարան և ՀԲԸՄ) համատեղ ձիգերուն համապատկերը:

Գահիրեի Համալսարանին մեջ հայագիտական ուսումնասիրություններու բաժինի մը ստեղծումը արաբական աշխարհի մակարդակով եզակի երեւոյթ մըն էր և չէր կրնար իրականութիւն դառնալ առանց Գահիրեի մեջ անկախ Հայաստանի պետութեան դիւանագիտական ներկայացուցչութեան առկայութեան:

Նկատելի է, որ այդ բաժինն ստեղծումը և ապա անոր պահպանումը, չնախատեսուած պարագաներու բերումով, ՀՀ Գահիրեի դեսպանութեան բացումէն սկսեալ Եգիպտոսի մեջ գործող իրերայաջորդ չորս դեսպաններուն համար տեսակ մը մնայուն մարտահրաւերի վերածուեցան:

Գահիրեի Համալսարանին մեջ հայագիտական ուսումնասիրություններու բաժին մը բանալու նախաձեռնութիւնը կը վերաբերի ՀՀ Եգիպտոսի անդրանիկ դեսպան Դոկտ. Էդուարդ Նալպանտեանի, որ այդ ուղղութեամբ իր կատարած հետապնդումներուն շնորհիւ յաջողած էր Մարտ 1999-ին Գահիրեի Համալսարանի ղեկավարութենէն խոստում ստանալ համալսարանի բանասիրական բաժանմունքին մեջ հայագիտական ուսումնասիրություններու ամպլիոն մը հաստատելու մասին:

Այս առիթով ՀՀ դեսպանը Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչութեան կ'առաջարկէր հիմնուելիք ամպլիոնին հաշուոյն Գահիրեի Համալսարանին 50,000 Ե.Ո.ի յատկացում մը կատարել:

Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչությունը քննարկելով այս առաջարկը և հաշուի առնելով նպատակին կարելությունը, համաձայն կը գտնուէր այդ յատկացումին:

6 Մարտ 1999-ին դեսպան Էդուարդ Նալպանտեան հանդիպում կ'ունենար համալսարանի նախագահ Դոկտ. Ֆարուք Իսմայիլ Ահմէտի և անոր փոխանորդին հետ, նախագահին ընդունարանին մէջ:

Այդ հանդիպումին ներկայ էր նաեւ փոքր պատուիրակություն մը,

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Գահիրէ 6 Մարտ 1999

Մեծայարգ Դոկտ. Տնօրէն
Գահիրեի Համալսարանի

Յետ բարի ողջոյնի,

Մեծ գնահատանքով և ուրախութեամբ տեղեկացանք Գահիրեի Համալսարանի բանասիրական բաժանմունքին մէջ հայերէն լեզուի բաժին մը բանալու լուրին:

Գահիրեի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը, որ բարեսիրական և մշակութային միություն մըն է, կ'ողջունէ այս որոշումը, և հաճոյքն ունի այս բաժնին բացումին առիթով յանձնելու 50,000 Ե.Ո.ի թիւ 860110 փոխգիրը, քաշուած Գահիրեի Համալսարանի հրամանին (ի նպաստ բանասիրական բաժանմունքի հայերէն լեզուի բաժնին) Պանք Տիւ Քեռ - Ատլիի վրայ:

Միությունս ձեզի կը մաղթէ մշտական յաջողություն և կը խնդրէ որ ընդունիք իր յարգանաց հաւաստիքը:

Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչութեան աւտենապետ

(ստորագրություն)

Պերճ Թէրզեան

որուն մաս կը կազմէին դեսպանատան խորհրդական Օր. Անահիտ Թովմասեան և տողերս գրողը, ինչպէս նաեւ Դոկտ. Մոհամէտ Ռէֆաաթ Էլ Իմամ, Դոկտ. Նայիրի Համբիկեան և Դոկտ. Վարուժան Գազանճեան, որոնք նոր բացուելիք կեդրոնին մէջ դասախօսելու հաւանական թեկնածուներ կը համարուէին:

Դոկտ. Նալպանտեանի և համալսարանի նախագահին միջեւ փոխանակուած յաւուր պատշաճի պաշտօնական խօսքերէն յետոյ,

**ԳԱՀԻՐԷԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐԱՍԵՆՆԱԿ**

Գահիրէ 13-3-1999

Տիար Պերճ Թերզեան
Ատենապետ Գահիրէի Հայկական Բարեգործական
Ընդհանուր Միութեան Վարչութեան

Յետ բարի ողջոյնի,

Անհուն շնորհակալութեամբ և խոր գնահատանքով ստացայ ձեր ազնիւ գրութիւնը, որ կը ներփակէր 50,000 Ե.Ու.ի թիւ 860110 փոխգիրը, որպէս յատկացում Գահիրէի Համալսարանի բանասիրական բաժանմունքի հայերէն լեզուի բաժնին:

Առիթէն օգտուելով, ձեզի կը ներկայացնեմ խոր շնորհակալութիւն և գնահատանք ձեր ազնիւ նուիրատուութեան համար, Ամենակարող Բարձրեալէն հայցելով որ ձեզի առողջութիւն պարգեւէ և մեզ բոլորիս յաջողութիւն՝ ծառայելու կրթութեան ազնիւ առաքելութեան և մեր թանկագին ու սիրելի Եգիպտոսին:

Հաճեցէք ընդունիլ յարգանացս հաւաստիքը:

Համալսարանի նախագահ
Ամենայն գնահատանքով

(ստորագրութիւն)

Դոկտ. Ֆարուք Իսմայիլ Ահմատ

սողերս գրողը կը հրաւիրուէր, ՀԲԸՄ-ի կողմէ, Գահիրէի Համալսարանին մէջ հայերէն լեզուի բաժին մը բանալու որոշումին համար Միութեան գնահատանքը և ուրախութիւնը յայտնող նամակը կարդալու եւ յիշեալ 50,000 Ե. Ո.ի յատկացումի փոխգիրը համալսարանի պատասխանատուներուն յանձնելու (ՀԲԸՄ-ի նամակը և համալսարանի նախագահին պատասխան նամակը տեսնել էջ 12 և 13):

Դոկտ. Նալպանտեան այս քայլով հաւանաբար ի մտի ունէր ամրագրել համալսարանին հետ եղած բանաւոր պայմանաւորութիւնը և առ այդ հայկական կողմը իբր առհաւատչեայ կը յանձնէր նշեալ գումարը:

Այս հանդիպումէն երեք օր վերջ, 9 Մարտ 1999-ին, ՀՀ դեսպանատան մէջ ողջերթի ընդունելութիւն մը կը կազմակերպուէր ի պատիւ Դոկտ. Նալպանտեանի, որ շուտով Փարիզ պիտի մեկնէր, հոն ստանձնելու ՀՀ Ֆրանսայի դեսպանի պաշտօնը, նա իս որպէս հաւատարմատար, յետոյ՝ որպէս արտակարգ և լիազօր դեսպան, Հայաստանի Հանրապետութիւնը պատուաբեր կերպով ներկայացնելէ վերջ:

* * *

Տողերս գրողը, յաջորդ բաժնին անցնելէ առաջ, շնորհակալութիւն կը յայտնէ Դոկտ. Վաչէ Ղազարեանի, իր վարած Մայրենի հրատարակչատան միջոցով սոյն գրքոյկին նախատպագրական աշխատանքները համբերութեամբ եւ բժախնդրութեամբ իրագործելուն համար:

Նոյնպէս՝ շնորհակալութիւն Գահիրէի համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի հայոց լեզուի դասախօս, բանաստեղծուհի Մարուշ Երամեանի, ներկայ աշխատութեան կարգ մը խմբագրական աշխատանքներուն օժանդակելուն և կատարած դիպուկ նշումներուն համար:

Նոյեմբեր 2017

Պերճ Թէրզեան

ԿԵՂՈՐՈՆԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀՈՒՈՎՈՅԹԸ

Դոկտ. Էդուարդ Նալպանտեանին կը յաջորդէր դեսպան Դոկտ. Սերգէյ Մանասարեան: Այդ շրջանին դեսպանատան անձնակազմին որպէս խորհրդական մաս կը կազմէր արաբագէտ Օր. Անահիտ Թովմասեան, որ կը շարունակէր Գահիրէի Համալսարանին հետ դեսպանութեան կապը պահպանել, հայագիտական ուսումնասիրութիւններու ամպլիոնին հարցը հետապնդել և այդ ուղղութեամբ համալսարանին պատասխանատուներուն հետ խորհրդակցութիւններ ունենալ:

Համալսարանին և հայկական կողմին պատասխանատուներն ունէին այն պատկերացումը, որ հայագիտական ուսումնասիրութիւններու բաժինը պիտի սկսէր գործել որպէս մասնաբաժին, որ ժամանակաւորապէս կցուած պիտի ըլլար լեզուի ամպլիոնի մը և հետզհետէ զարգանալով պիտի վերածուէր անկախ ամպլիոնի:

Այս ուղղութեամբ բանասիրական բաժանմունքի տնօրէնը կ'առաջարկէր որ հայագիտական ուսումնասիրութիւններու մասնաբաժինը սկիզբի շրջանին կցուի թրքերէն լեզուի ամպլիոնին...: Հայկական կողմը բնականօրէն կ'առարկէր այս առաջարկին դէմ և կը նախընտրէր որ հայկական մասնաբաժինը բանասիրական բաժանմունքին մէջ գոյութիւն ունեցող երեք արեւելեան լեզուներու բաժիններէն (թրքերէն, եբրայերէն և պարսկերէն) պարսկերէնի բաժնին միացուի:

Մինչ այդ, հայագիտական ուսումնասիրութիւններու ամպլիոնին բացումը կը յետաձգուէր համալսարանին պատասխանատուներուն այն բացատրութեամբ, թէ յարմար վայր գոյութիւն չունէր կեդրոնը հիմնելու, մանաւանդ որ Չինաստանը եւս չինական ուսումնասիրութիւններու կեդրոն մը հաստատելու փափաք յայտնած էր: Այնպէս որ հայագիտական կեդրոնի բացումը կախեալ կը մնար բանասիրական Բաժանմունքին մէջ ազատ տարածք գտնուելու կարելիութենէն:

Այդ ընթացքը կը շարունակուէր մինչեւ ՀՀ դեսպանատան խոր-

հրրդական Օր. Անահիտ Թովմասեանի Եգիպտոսի մէջ պաշտօնավարութեան առաջին շրջանին աւարտը (2000 թ.): Այդ առիթով ան իր մեկնումէն առաջ ՀՀ դեսպանութեան կողմէ կը պատրաստէր համալսարանին ուղղուած համապարփակ գրութիւն մը, որ կը կրէր դեսպան Մանասարեանի ստորագրութիւնը:

Այդ գրութեան նպատակն էր արձանագրել դեսպանութեան կողմէ մինչ այդ տարուած աշխատանքները և կրկին անգամ շեշտել հայագիտական ուսումնասիրութիւններու կեդրոն մը հիմնելու կարելորութիւնը: (Գրութիւնը տեսնել էջ 17-18):

Նախատեսուած էր նաեւ որ այդ գրութիւնը համալսարանին մօտ հայագիտական ուսումնասիրութիւններու կեդրոնին թղթածրարին մէջ մնար որպէս հայկական կողմին տեսակէտը լուսաբանող փաստաթուղթ:

2004 թուականին Դոկտ. Սերգէյ Մանասարեան կը մեկնէր Եգիպտոսէն ստանձնելու համար ՀՀ Պուլկարիոյ դեսպանի պաշտօնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Գահիրէ, 6 Օգոստոս 2000

Փրոֆէսոր Էլ Սայէտ Էլ Սայէտ Էլ Հուսէյնի,
Բանասիրական Բաժանմունքի Տնօրէն
Գահիրէի Համալսարան

Նախ եւ առաջ թոյլ տուէք Ձեզի իմ խորին շնորհակալութիւնս յայտնել Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան հետ Ձեր անկեղծ համագործակցութեան, Ձեր կողմէ ցուցաբերուած աջակցութեան եւ ջերմ վերաբերմունքին համար:

Ինչպէս Ձեզի յայտնի է, 1999 թուականի Մարտին առնուեցաւ Գահիրէի Համալսարանին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու ամպլիոն մը հիմնելու որոշումը, որ մեծ երախտագիտութեամբ ընդունուեցաւ թէ՛ Հայաստանի գիտական եւ մշակութային շրջանակներէն եւ թէ՛ եգիպտահայ համայնքին կողմէ:

Որոշումը ընդունուելէն յետոյ, ամպլիոնին հիմնադրութեան հետ կապուած հարցերը քննարկելու նպատակով Ձեր եւ Գահիրէի Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան խորհրդականին եւ Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ատենապետ Պրն. Պերճ Թէրզեանի միջեւ կայացան հանդիպումներ, որոնց ներկայ գտնուեցան Ձեր ղեկավարած բաժանմունքէն ներկայացուցիչներ: Հանդիպումներուն ընթացքին դուք հանգամանօրէն ձեւակերպեցիք խնդրին իրականացման հնարաւոր տարբերակներն ու առկայ դժուարութիւնները:

Հասկնալով հանդերձ թէ կազմակերպչական, ինչպէս նաեւ նիւթական եւ այլ դժուարութիւններու հետ կապուած է ցանկացուած նոր ամպլիոնի հիմնադրութիւնը, կը յուսամ Ձեր ուշադրութիւնը ունենալ շատ կարելոր հանգամանքի մը մասին:

Հայ ժողովուրդը տարածաշրջանի հնագոյն ժողովուրդներէն մէկը ըլլալով, իր պատմամշակութային անցեալով սերտօրէն շաղկապուած է արաբ, պարսիկ եւ թուրք ժողովուրդներուն հետ: Դարեր շարունակ այդ ժողովուրդներուն հետ կողք-կողքի ապրելով, ան իր անուրանալի աւանդը բերած է տարածաշրջանի տնտեսութեան, գիտութեան եւ մշակոյթի զարգացումին: Փոխադարձաբար ան կրած է այդ ժողովուրդներուն բազմաբնոյթ ազդեցութիւնը իր

երկար պատմության ընթացքին: Հիմնուելով վերոյիշեալ տուեալներուն վրայ, որեւէ գիտական ուսումնասիրութիւն տարածաշրջանի պատմական եւ մշակութային զարգացումներուն մասին կրնայ թերի ըլլալ, եթէ այդ ծիրին մէջ չընդգրկուի նաեւ հայագիտութիւնը: Բացի պատմամշակութային անցեալէն, հայկական մեծ համայնքներու ժամանակակից ներկայութիւնը տարածաշրջանի երկիրներուն մէջ (Իրան, Թուրքիա, Սուրիա, Լիբանան, Իսրայէլ, Յորդանան եւ Եգիպտոս) և անոնց աշխոյժ մասնակցութիւնը այդ երկիրներուն տնտեսական, մշակութային և հասարակական կեանքին և Խորհրդային Միութեան փլուզումով զուգահեռաբար Հայաստանի Հանրապետութեան անկախ պետութեան հաստատումը՝ լրացուցիչ լիցք կը հաղորդեն հայագիտական ուսումնասիրութիւններու ամպիոնի իրականացումին համար:

Նշեալ տուեալները կը բացատրեն հայագիտական ամպիոններու առկայութեան երեւոյթը Իրանի, Թուրքիոյ և Իսրայէլի, ինչպէս նաեւ աշխարհի շարք մը յայտնի համալսարաններուն մէջ:

Գահիրէի Համալսարանին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու ամպիոն հիմնելու որոշումը կը լրացնէ այն բացը, որ մինչ այժմ գոյութիւն ունէր արաբական աշխարհին մէջ:

Հայկական կողմին համար մասնաւոր հպարտութեան առիթ է, որ այդ ամպիոնը պիտի հիմնուի արաբական աշխարհի ծանրութեան կեդրոն Եգիպտոսի և յատկապէս Գահիրէի Համալսարանին մէջ, որ բարձր հեղինակութիւն ունի ոչ միայն տարածաշրջանին, այլև ամբողջ աշխարհի մէջ:

Յարգելի Դոկտոր Հոսէյնի, Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան անունով կ'ուզեմ Ձեզ վստահեցնել, որ հայկական կողմը պատրաստ է ամէն աջակցութիւն բերելու և ըստ ամենայնի նպաստելու ամպիոնի կայացման:

Թոյլ տուէք յոյս յայտնել, որ համատեղ ջանքերով մենք պիտի կրնանք իրականացնել մեր առջեւ դրուած դժուարին, բայց կարելոր խնդիրը:

Կրկին շնորհակալութիւն Ձեր անկեղծ գործակցութեան համար և հաճեցէք ընդունիլ յարգանացս հաւաստիքը:

Անկեղծօրէն

(ստորագրութիւն)

Ս. ՄԱՆԱՍԱՐԵԱՆ
(ՀՀ Եգիպտոսի Դեսպան)

Դոկտ. Սերգեյ Մանասարեանի կը յաջորդէր դեսպան Դոկտ. Ռուբէն Կարապետեան, որ արաբագէտ ըլլալով առաջին օրէն կը փարէր հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոնին հաստատումի գաղափարին և մօտէն կը հետապնդէր անոր իրագործումը:

Այս ուղղութեամբ Դոկտ. Կարապետեան կը յաջողցնէր 17 Յուլիս 2005-ին Գահիրէի Համալսարանին և Երեւանի Պետական Համալսարանին միջեւ համագործակցութեան համաձայնագրի մը ստորագրութիւնը, որուն երկրորդ յօդուածը կը նշէր.

Երեւանի Պետական Համալսարանը պիտի ներկայացնէ հարկ եղած կազմակերպչական, մեթոտական և գիտական աջակցութիւնը, Գահիրէի Համալսարանին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու բաժին մը հիմնելու և հոն գիտական ուսումնասիրութիւններ կատարելու համար:

Այս քայլը օրինական հիմք կու տար հայագիտական կեղրոն մը հիմնելու հարցին, ամրագրելով մինչ այդ բանաւոր կերպով ձեռք բերուած հաւանութիւնները:

* * *

Դեսպան Դոկտ. Կարապետեան 2005-ի Դեկտեմբերին ՀՀ ատենի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի պաշտօնական այցով Եգիպտոս գալու շրջանին վարչապետին և Գահիրէի Համալսարանի նախագահին միջեւ կը կարգադրէր հանդիպում մը, որուն ընթացքին, ի շարս այլ հարցերու, կ'արծարծուէր հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոն մը հիմնելու հարցը: Համալսարանի նախագահը կը վերահաստատէր այդ ուղղութեամբ անցեալին տրուած հաւանութիւնը:

Հակառակ այս զարգացումներուն, հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոնին բացումը կը յամենար: Տուեալ իրադրութիւնը

կը մղէր դէսպան Դոկտ. Ռուբէն Կարապետեանը այս հարցով երկիցս դիմելու Եգիպտոսի ատենի վարչապետ Դոկտ. Ահմէտ Նազիֆին, որ հարցին բարեացակամօրէն մօտենալով կը հրահանգէր Գահիրէի Համալսարանի բանասիրական բաժանմունքին, որ հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոնը բացուի:

Այս տնօրինումը կը զուգադիպէր ՀՀ նախագահ Ռոպէրթ Քոչարեանի 14-16 Ապրիլ 2007-ին Եգիպտոս կատարած պաշտօնական այցելութեան, որմէ մէկ օր առաջ, 13 Ապրիլ 2007 թուակիր «Բանաւոր Յուշագիր» (*մոզագգիրա շաֆահէյա*) խորագիրը կրող Եգիպտոսի միջազգային համագործակցութեան նախարարութենէն (Նախարարուհիի գրասենեակ) Հայաստանի Հանրապետութեան Գահիրէի դեսպանատան ուղղուած գրութիւն մը կը տեղեկացնէր թէ «ՀՀ նախագահին Եգիպտոս այցելութեան առիթով, եգիպտական կողմը իր հաւանութիւնը տուած է հայկական կողմին ինդրանքին՝ Գահիրէի Համալսարանին բանասիրական բաժանմունքին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոն մը հիմնելու կապակցութեամբ» (տեսնել էջ 21):

Յատկանշական է որ այդ այցելութեան ընթացքին ՀՀ-ի և ԵԱՀ-ի միջեւ ութ պայմանագրեր կը ստորագրուէին:

Ստորագրութեան արարողութենէն յետոյ տեղի ունեցած ասուլիսի ընթացքին Եգիպտոսի վարչապետը կը շեշտէր թէ ստորագրուած պայմանագրութիւնները պիտի սատարէին զարգացնելու երկկողմ յարաբերութիւնները տնտեսական և մշակութային բնագաւառներէն ներս:

Իր խօսքին մէջ վարչապետը կը շեշտէր կարեւորութիւնը գիտական և կրթական մարզերուն մէջ գործունէութեան խորացումին և յատուկ կերպով կ'ընդգծէր որ ինք անձնապէս հաւանութիւն տուած է Գահիրէի Համալսարանին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոն բանալու:

Վարչապետ Ահմէտ Նազիֆ կը նշէր որ հայագիտական այս կեղրոնը հնարաւորութիւն կու տայ գիտամշակութային առումով աւելի մերձեցնելու երկու ժողովուրդները:

**ԵԱՀ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒՀԻԻ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ**

Շտապ

Բանառք Յուշագիր

ԵԱՀ Միջազգային Համագործակցության Նախարարությունը – Նախարարուհիի գրասենեակը – իր ջերմագոյն ողջոյնները կը փոխանցէ Հայաստանի Հանրապետության Գահիրէի Դեսպանութեան: Հայաստանի Հանրապետության նախագահի 14-16 Ապրիլ ժամանակամիջոցին Եգիպտոս այցին առիթով պատիւը ունինք յայտնելու թէ Եգիպտական կողմն իր հաւանութիւնը տուած է հայկական կողմին խնդրանքին, Գահիրէի Համալսարանի բանասիրական բաժանմունքին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու կեդրոն մը հիմնելու կապակցութեամբ:

Միջազգային համագործակցության նախարարությունը – Նախարարուհիի գրասենեակը – օգտուելով այս առիթէն իր ողջոյնները և գնահատանքը կը յայտնէ Հայաստանի Հանրապետության դեսպանութեան:

Գահիրէ 13 Ապրիլ 2007

Հայաստանի Հանրապետության Գահիրէի դեսպանութեան:

* * *

ՀՀ նախագահին Եզիպտոս այցելութենէն շուրջ երեք ամիս վերջ, Կեղրոնը վերջապէս իր գոյութեան իրաւունքը կը ստանար Բարձրագոյն Կրթութեան և Գիտական Հետազօտութիւններու Պետական Նախարար և Համալսարաններու Բարձրագոյն Խորհուրդի Նախագահ Դոկտ. Հանի Հիլալի՝ հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոն մը հիմնելու վերաբերեալ 8 Յուլիս 2007 թիւ 123 որոշմնագրով:

ՀՀ Գահիրէի դեսպանատան և եզիպտական պատկան մարմիններուն միջեւ փոխանակուած նամակագրութեան մէջ, Գահիրէի Համալսարանի բանասիրական բաժանմունքին կից հիմնուելիք Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոնը բնութագրուած է որպէս գիրքեր և տեղեկագրեր լոյս ընծայող ուսումնասիրական կեղրոն, որ կը կազմակերպէ հայոց լեզուի դասընթացքներ: Ան կը համարուի յատուկ կարգավիճակով միատր մը, որ ունի իր կեղրոնատեղին և որեւէ գիտական աստիճան չի շնորհեր:

Այստեղ կ'արժէ արձանագրել թէ Գահիրէի Համալսարանին մէջ հայագիտական կեղրոն մը հիմնելու գործընթացը, որ 1999-ին սկսած էր, ամբողջ ութ տարի տեւեց և միայն 2007-ի Սեպտեմբերին է որ այդ կեղրոնը սկսաւ գործել:

Այս երկար ուշացումին համար զանազան պատճառաբանութիւններ առաջ կը քշուէին: Օրինակ՝ գիտական խորհուրդներու և պատկան նախարարութեան կողմէ հարցին քննարկումին անհրաժեշտութիւնը, վարչական գործողութիւններու դանդաղութիւնը, դասախօսներու բացակայութիւնը, ուսանողներու մօտ հայերէնի հետեւելու հետաքրքրութեան պակասը և նոյնիսկ հայ-թրքական խնդիրներ:

Գոյութիւն ունէր նաեւ այլ վարկած մը, որուն մասին շատ քիչ կը խօսուէր:

Ըստ շրջող զրոյցներու, բանասիրական բաժանմունքին մէջ գործող թրքական բաժնի դասախօսական կազմը ժողով մը գումարելով պահանջած է որ հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոնը չբացուի, քանի որ անոր գոյութիւնը կրնայ քաղաքական լարուածութիւն յառաջացնել:

2009-ին Դոկտ. Ռուբեն Կարապետեան կը մեկնէր Հոռոմ ստանձնելու ՀՀ Իտալիոյ դեսպանի պաշտօնը:

Դոկտ. Ռուբեն Կարապետեանին կը յաջորդէր դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեան, որ դարձեալ արաբագէտ էր և նախապէս որպէս խորհրդական պաշտօնավարած էր ՀՀ Գահիրէի դեսպանատան մէջ (1994-1997):

Ինչպէս վերը նշեցինք, Կեղրոնը Սեպտեմբեր 2007-ին կը սկսէր իր գործունէութեան, որ կը շարունակուէր շուրջ վեց տարի մինչեւ 2013 Ապրիլի կէսը, երբ համալսարանը «սառեցուց» անոր գործունէութիւնը:

Այդ շրջանին մասին ընթերցողը կը յղենք յաջորդ էջերուն մէջ (տեսնել էջ 34 - 40) տեղադրուած համապարփակ յուշագրի մը, զոր ՀՀ դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեան պատրաստած էր և ներկայացուցած Գահիրէի Համալսարանի ղեկավարութեան, Կեղրոնին գործունէութեան սառեցումին առիթով:

Հոս կը բաւականանք կարգ մը լրացուցիչ մանրամասնութիւններ տալով միայն:

Նկատելի է, որ Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոնը սկսաւ գործել բանասիրական բաժանմունքի ծիրէն ներս իբրեւ անկախ և առանձին միաւոր, որ կապ չունէր բանասիրականի արեւելեան լեզուներու երեք բաժիններէն որեւէ մէկուն հետ: Այս կարգավիճակը կը տարբերէր մինչ այդ նախատեսուած կառուցուածքային ծրագիրներէն:

Սակայն, նոյն ատեն, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոնին տնօրէնուի կը նշանակուէր Դոկտ. Զէյնապ Ապու Սէննա, որ թրքագէտ մըն էր և կու գար բանասիրականի թրքական բաժինէն: Այս նշանակումը, որքան ալ անյարմար, կիյնար բանասիրականի ղեկավարութեան իրաւասութեան ծիրէն ներս և հայկական կողմը չէր

կրնար առարկություն ընել այդ մասին:

Կեղրոնը շուտով կունենար իր վարչական խորհուրդը հետեւեալ կազմով.

Փրոֆ. Դոկտ. Ահմէտ Ապտալլա Զայէտ	նախագահ վարչական խորհուրդի
Փրոֆ. Դոկտ. Ֆատիա Մոհամէտ Զաքի Էլուան	փոխ նախագահ վարչական խորհուրդի
Փրոֆ. Դոկտ. Զէյնապ Սաատ Զադլուլ Ապու Մէննա	կեղրոնի տնօրէնուհի
Փրոֆ. Դոկտ. Ապտալլա Էլրաթաուի	անդամ
Փրոֆ. Դոկտ. Զէյն Էլ Ապէտին Մահմուտ Հասան	անդամ
Փրոֆ. Դոկտ. Էլ Սիպայի Մոհամէտ Էլ Սիպայի	անդամ
Փրոֆ. Դոկտ. Մոհամէտ Ալա Էլ Տին Մանսուր	անդամ
Փրոֆ. Դոկտ. Լէյլա Ապտէլ Կաուատ Իսմայիլ	անդամ
Դոկտ. Ապտէլ Հաֆիզ Մոհամէտ Իպրահիմ Եագուպ	անդամ
Դոկտ. Էմատ Պատր Էլ Տին Ապու Ղազի	անդամ
Դոկտ. Մոհամէտ Րէֆաաթ Էլ Իմամ	անդամ
Դոկտ. Վարուժան Գազանճեան	անդամ
Դոկտ. Նայիրի Համբիկեան	անդամ

Վերելի անուններէն վերջին երեքին թեկնածութիւնը առաջարկուած էր հայկական կողմէն: Յետագային Դոկտ. Նայիրի Համբիկեանին կը փոխարինէր բժիշկ Արմէն Մազլումեան:

Ամէն անգամ որ Կեղրոնին վարչական խորհուրդին տնօրէնը կը փոխուէր, նոր տնօրէնը վարչական խորհուրդին կազմին մէջ փոփոխութիւններ կը մտցնէր հրաւիրելով նաեւ հայկական կողմէն ներկայացուած նոր թեկնածուներ:

Այս ուղղությամբ Կեղրոնին վարչական խորհուրդին մաս կազմած են Դոկտ. Ճորճ Սիմոնեան (Հելուանի համալսարանի կիրառական արուեստներու բաժանմունքի տնօրենի գործակատար), Վարդգէս Յովսէփեան (ՀՀ-ի Գահիրէի Դեսպանատան երրորդ քարտուղար) և Ստեփան Գեորգեան (ՀՀ-ի Գահիրէի Դեսպանատան կցորդ):

Կեղրոնի տնօրէնուհին թրքական բաժինէն եկած ըլլալով, բնական էր որ գաղափար չունենար հայկական նիւթերու շուրջ:

Սակայն, ան իր պաշտօնը կը կատարէր միշտ ուշադիր ըլլալով, որ յանկարծ Կեղրոնէն ներս «քաղաքականացած» մթնոլորտ չստեղծուի:

Կեղրոնին կողմէ 13 Դեկտեմբեր 2007-ին կազմակերպուած առաջին հրապարակային ձեռնարկին, «Հայ-արաբական յարաբերութիւններ» խորագրով դասախօսութեամբ ելոյթ կ'ունենար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ և Արեւելագիտութեան Հիմնարկի տնօրէնին խորհրդական Փրոֆ. Նիկոլայ Յովհաննիսեան:

Յետագային դասախօսական ելոյթներ ունեցած են նաեւ այլ անձեր, որոնց անունները տրուած են ստորեւ:

Դոկտ. Վարուժան Գազանճեան «Հայ լեզուն, գրականութիւնը և մշակոյթը» խորագրով:

Եգիպտահայ կաթողիկէ համայնքի վիճակաւոր, Գերապայծառ Գրիգոր Գուսան «Հայ կաթոլիկները արդի Եգիպտոսի մէջ» խորագրով:

Դոկտ. Մոհամէտ Րէֆաաթ Էլ Իմամ «Հայերը, Արեւմուտքը և մահմետականութիւնը» խորագրով:

Աղեքսանդրիոյ Համալսարանի օգնական դասախօս Ղատա Մուսա «Նուպար փաշա և եգիպտական դիւանագիտական դպրոցը 19-րդ դարուն» խորագրով:

Դոկտ. Գեորգ Պարտաքճեան «Հայերէնի մէջ փոխ առնուած արաբերէն բառեր և անոնց ազդեցութիւնը հայ գրականութեան մէջ» խորագրով:

Աղեքսանդրիոյ Համալսարանի բանասիրական բաժանմունքի օգնական դասախօս Ինճի Հասան Հիւսէյն «Հայաստանի դերը հռով-

մայեցիներու և պարթեւներու հակամարտութեան մէջ» խորագրով:

Դոկտ. Ահմէտ Էլ Ատաուի «Մահմետական հայ գիտնականները և անոնց դերը իսլամական գիտական կեանքին մէջ» խորագրով:

Դոկտ. Ահմէտ Մոհամէտ Իպրահիմ «Եգիպտահայ համայնքը Մեմլուքեան շրջանին» խորագրով:

Դոկտ. Էտուար Դանիէլեան «Հայերէնի հին ըմբռնումները միջին դարերուն և արաբական աղբիւրները» խորագրով:

Կեղորոնը իր առաջին գիտաժողովը կը կազմակերպէր 29 Ապրիլ 2008-ին «Հայ-արաբական յարաբերութիւնները անցեալին և այսօր» ընդհանուր խորագրով, որուն կը մասնակցէին 4 երկիրներէ՝ Եգիպտոս, Սուրիա, Լիբանան և Հայաստան, 22 զեկուցողներ:

Տիրող մթնոլորտին մասին գաղափար մը տալու համար կ'արժէ արձանագրել թէ, երբ զեկուցողներէն մին իր ելոյթին ընթացքին՝ անցողակի կերպով շնորհակալութիւն յայտնեց արաբ ժողովուրդին՝ հայկական ցեղասպանութեան ընթացքին անոր ցուցաբերած ազնուական ոգիին համար, Կեղորոնին տնօրէնուհին, որ գիտաժողովին այդ նիստին ատենավարն էր, անմիջապէս միջամտեց, խնդրելով որ գիտաժողովը «չքաղաքականացուի», կարծէք ցեղասպանութեան մասին խօսիլը և արաբ ժողովուրդին շնորհակալութիւն յայտնելը կ'առաջնորդեն նիստին քաղաքականացումին:

Մինչ այդ, ներկաներուն մէջ գտնուող պատմութեան աւագ դասախօս մը, ուղղակի ոտքի կանգնելով կասկածի կենթարկէր հայոց ցեղասպանութեան զոհերու թիւը, ինչպէս նաեւ կունենար այնպիսի արտայայտութիւն մը, որուն մեկնաբանութիւնը կը հասներ հոն՝ թէ Հայաստան գոյութիւն չէ ունեցած, քանի որ գոյութիւն չունին հայկական յստակ և հաստատ սահմաններ: Իր ըսելիքը աւարտելէն յետոյ, յիշեալ դասախօսը նիստը կը ձգէր և կը մեկնէր:

Տեղոյն վրայ այդ երկու սխալ վարկածներուն մասին խօսիլը անկարելի ըլլալով, տողերս գրողը գիտաժողովէն յետոյ «Արեւ»ի արաբերէն ամսօրեայ յաւելումին մէջ, որ տարածում ունէր համալսարաններու պատմութեան դասախօսներու մօտ, լուսաբանական յօդուած մը կը գրէր (յօդուածին թարգմանութիւնը տեսնել յաջորդ էջը):

ՆՀՈՒՄՆԵՐ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՀԵՐՈՒ ԹԻԲՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Անցեալ Ապրիլի 29-ին Գահիրէի Համալսարանին մէջ տեղի ունեցաւ գիտաժողով մը, որուն նիւթն էր «Արաբական հայրենիքը-Հայաստանը-անցեալը և ներկան, հայ արաբական յարաբերութիւնները»:

Այս գիտաժողովին, որ իր տեսակին մէջ առաջինը կը համարուի, 22 ուսումնասիրողներ 4 երկիրներէ՝ Եգիպտոս, Սուրիա, Լիբանան և Հայաստան, զեկոյցներ ներկայացուցին հայ-արաբական յարաբերութիւններուն տարբեր երեսակներուն մասին: Գիտաժողովը ընդհանուր առմամբ յաջող կը համարուի, սակայն գոյութիւն ունին կարգ մը նշումներ, որոնց մասին անպայման պէտք է արտայայտուի:

Ժողովին ընթացքին ելոյթ ունեցողներէն մէկը հազիւ թէ անցողակիօրէն ակնարկութիւն մը ըրաւ իր խօսքին մէջ հայկական ցեղասպանութեան մասին, Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին տնօրէնուհին անմիջապէս միջամտեց, պահանջելով որ գիտաժողովը «չքաղաքականացուի», կարծէք թէ հայկական ցեղասպանութեան մասին խօսիլը և արաբ ժողովուրդներուն ազնիւ վերաբերմունքին յիշատակումը ինչ կը վերաբերի հայոց տագնապին ընթացքին անոնց ընձեռած օգնութեան, պատահած դէպքերուն թուումը չէ, այլ իրականութեան «քաղաքականացում»ը:

Ասոր վրայ աւելցնենք Գահիրէի Համալսարանի պատմութեան աւագ դասախօսներէն մէկուն միջամտութիւնը, որուն ընթացքին ան կուզէր կասկած յառաջացնել հայկական ցեղասպանութեան իրողութեան և անոր զոհերու թիւին մասին: Ան իր ելոյթին մէջ ունեցաւ այնպիսի արտայայտութիւն, որ կրնայ մեկնաբանուիլ այնպէս՝ թէ Հայաստանը գոյութիւն չունէր, քանի որ ան հաստատ սահմաններ չունէր:

Կուզէինք ամենէն առաջ հաստատել թէ մենք կը հաւատանք

կարծիքի ազատության և այլակարծության: Մենք արգելք չունինք քննարկելու որեւէ հարց, որ կապ ունի հայության հետ, պայմանաւ որ քննարկող կողմերը անկողմնակալ ըլլան և մէկ կողմին շահերը չգերադասեն միւսին, իրենց վիճաբանութիւնները հիմնուած ըլլան իրողութիւններու և փաստերու վրայ և ոչ թէ ենթադրութիւններու, զորս կարգ մը շեփոքահարներ կը յանկերգեն, ամէն առիթով և առանց որեւէ յենակի: Այդ պատճառով, յարմար կը դատենք մեր կարծիքը յայտնել երկու նիւթերու շուրջ, որոնք արծարծուեցան գիտածողովի ընթացքին.

**Առաջին – Ինչ կը վերաբերի Օսմանեան Թուրքիոյ կողմէ
գործադրուած հայկական ցեղասպանության զոհերու թիւին:**

Թրքական աղբիւրները կը յանկերգեն թէ հայկական աղբիւրներու կողմէ հայկական ցեղասպանության զոհերուն թիւ ներկայացուած 1.5 միլիոնը սխալ և չափազանցուած է, և Օսմանեան Թուրքիոյ մէջ համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին զոհուած հայերուն թիւը 300,000 է, և այդ հայերը ցեղասպանության հետեւանքով չէ որ մահացած են, այլ պատերազմին հայերու և թուրքերու միջեւ կայացած ընդհարումներու ընթացքին:

Մենք պիտի չարձանագրենք հայկական ցեղասպանության պատմութիւնը: Արդարեւ ատիկա կատարած են հռչակաւոր և լուրջ գիտնականներ, հիմնուելով խարանդ պատմական վաւերագրերու վրայ: Կը բաւէ թրքական աղբիւրներուն և անոնց զօրավիգ կանգնողներուն հարց տալ թէ ինչպէ՛ս կարելի է պատկերացնել ընդհարումներ երկու կողմերու միջեւ, որոնցմէ մէկը օսմանեան կառավարութիւնն է իր խիստ տիրապետութեամբ, իր բանակով և զէնքով ու իր յայտնի և անյայտ կազմակերպութիւններով, իսկ միւս կողմը անզէն ժողովուրդ մը, որուն 15-45 տարեկան զաւակները օսմանեան բանակին մէջ զինուորական ծառայութեան կանչուած էին: Ասոնցմէ դուրս կը մնային մանուկները, կիները և տարեց այր մարդիկը, որոնք պիտի կռուէին թուրքերուն դէմ առանց զէնք ունենալու, այն ժամանակ երբ սուրիական անապատ կը քշուէին յոգնատանջ վիճակի մը մէջ և կը տառապէին տաքէն, ծարաւէն, անօթութենէ, համաճարակներէ և նուաստացումներէ:

Ասոր վրայ պէտք է աւելցնել այլ հարցադրում մը: Առաջին համաշ-

խարհային պատերազմի սկիզբը Օսմանեան Թուրքիոյ մէջ հայերու թիւը աւելի քան երկու միլիոն կը հաշուէր: Պատերազմի աւարտին այս թիւին մէկ տասներորդէն պակասը ողջ մնացած էր: Ո՞ր գացին մնացածները:

Եթէ համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին աներեւութացած հայերուն թիւը, ըստ թրքական գնահատումներու, միայն 300,000 էր և ոչ թէ 1.5 միլիոն, արդեօք 300,000 զոհի թիւը բոլոր չափանիշներով բաւարար չէ՞ թուրքերը դատապարտելու ցեղասպանութեան ռճիրը գործադրած ըլլալուն համար:

Երկրորդ – Ինչ կը վերաբերի Հայաստանի սահմաններուն և անոնց հաստատ չըլլալուն:

Հոս յիշուած Հայաստանը բնականաբար Սովետական Միութեան հանրապետութիւններէն մին եղող Հայաստանի հանրապետութիւնը չէ, որ իր անկախութիւնը ստացաւ 16 տարի առաջ և որուն սահմանները ճանչցուած և ճշդուած են:

Հոս Հայաստան ըսելով կը հասկնանք Թուրքիոյ ներկայ հանրապետութեան արեւելքը գտնուող հայկական պատմական հողերը, որոնք ծանօթ են իբրեւ հայկական նահանգներ:

Այս նահանգները խնդրոյ առարկայ եղած են և իրենց սահմանները ճշդուած՝ երկու միջազգային փաստաթուղթերու մէջ:

Անոնցմէ առաջինը այն համաձայնագիրն է, զոր Օսմանեան Թուրքիան ստորագրած է Յարական Ռուսաստանի հետ Փետրուար 1914-ին, այսինքն համաշխարհային առաջին պատերազմին բռնկումէն քանի մը ամիս առաջ:

Այս համաձայնագիրը կը նպատակադրէր հայկական նահանգներէն ներս հայերու անմարդկային վիճակը բարելաւել:

Համաձայնագիրը նկատի կ'առնէր հայերու բնական եօթը նահանգները: Այդ նահանգներն էին՝ Վան, Պիթլիս, Էրզրում, Տիարպէքի, Խարբերդ, Սեբաստիա (Սվազ) ինչպէս նաեւ Տրապիզոն:

Համաձայնագիրը կը բաղկանար քսանչորս յօդուածներէ, որոնք կը

սահմանելին այն հիմունքները և սկզբունքները, որոնց միջոցով պիտի կանոնաւորուէին վարչական, զինուորական, կրթական և իրաւական հարցերը:

Վերոյիշեալ նահանգները բաժնուած էին երկու մասի, ա և բ: Անոնցմէ իւրաքանչիւրը կը գլխաւորէր ընդհանուր քննիչ մը, որ կ'ընտրուէր եւրոպական փոքր պետութիւններէն և կը կատարէր ընդհանուր կառավարիչի պարտականութիւնները:

Այս համաձայնագրին իբր գործադրութիւն, ընդհանուր քննիչներ նշանակուեցան նորվեկիացի Հոֆը և հոլանտացի Վեստենէնկը, որոնց շնորհուեցաւ պէյութեան տիտղոսը: Ասոնցմէ Հոֆը անմիջապէս Վան մեկնեցաւ իր պաշտօնը ստանձնելու:

Սակայն, քանի մը ամիս յետոյ բռնկող համաշխարհային առաջին պատերազմը օսմանեան ղեկավարութեան համար ոսկեղէն առիթ մըն էր 1915-ին հաւաքական ջարդերը գործադրելու, հայերէն ձերբազատուելու համար, ոչ միայն հայկական նահանգներուն մէջ, այլեւ՝ Օսմանեան Թուրքիոյ ամբողջ տարածքին վրայ: Այս ձեռով Հայկական Յեղասպանութիւնը արգելք հանդիսացաւ այս համաձայնագրին գործադրութեան:

Երկրորդ միջազգային փաստաթուղթը, որ կ'անդրադառնայ արեւելեան Թուրքիոյ հայկական նահանգներուն, Սեւրի Դաշնագիրն է, որ առաջին համաշխարհային պատերազմի աւարտէն վերջ կնքուեցաւ հաշտութեան բանակցութիւններ վարելէ յետոյ, 20 Օգոստոս 1920-ին:

Դաշնագիրը ստորագրող կողմերը լիազօրեցին ԱՄՆ-ի նախագահ Ուիլսընը, որ գծէ Արեւմտեան Հայաստանի սահմանները, ինչ որ իրագործուեցաւ և այդ իրաւարարութեան արդիւնքը ներկայացուեցաւ պատկան երկիրներուն 22 Նոյեմբեր 1920-ին:

Նախագահ Ուիլսընի գծած արեւմտեան Հայաստանի սահմանները կ'ընդգրկէին Վանի, Պիթլիսի, Էրզրումի նահանգները և Տրապիզոնի նահանգին մէջ ելք մը դէպի Սեւ Ծով:

Սակայն Ռուսիոյ մէջ ծայր առած Պոլշեւիկեան Յեղափոխութեան հետեւանքները և անոնց ազդեցութիւնը Կովկասի վրայ, ինչպէս նաեւ

Թուրքիոյ մէջ Քէմալական Շարժումի կազմաւորումը և թրքական բանակներու Հայաստանի վրայ յարձակումը, ի խնդիր Հայաստանի արեւելքը գտնուող թրքական ծագում ունեցող ժողովուրդներուն հետ միաւորուելու, նոյնպէս այդ ժամանակահատուածին ընթացքին տեղի ունեցած հսկայ վերիվայրումները՝ արգելք հանդիսացան Սեւրի Դաշնագրէն բխող ԱՄՆ-ի նախագահ Ուիլսոնի իրաւարարութեան պայմանները գործադրելու:

Պոլշեիկեան Ռուսիոյ և Թուրքիոյ միջեւ կնքուած «վերջնական» դաշնագրերը ճշդեցին միջպետական սահմանային բաժանումները, որոնք առկայ են ցարդ: Պոլշեիկեան Ռուսիան Թուրքիոյ յանձնեց Սուրմալու հայկական գաւառը, որ մաս կը կազմէր Արեւելեան Հայաստանի, երբ այս վերջինը կիյնար Պարսկաստանի սահմաններուն մէջ, ապա կանցնէր Ռուսիոյ: Այդ գաւառը երբեք և որեւէ ժամանակ մաս չէ կազմած Թուրքիոյ:

Վերոնշեալէն յստակ կը դառնայ թէ Հայաստանի արեւմտեան սահմանները կատարելապէս յայտնի են, և խնդրոյ առարկայ եղած են երկու միջազգային դաշնագրերու պարագային, զորս Թուրքիա չէ գործադրած, այլ ընդհակառակը՝ զանոնք խախտելով յարձակած է Արեւելեան Հայաստանի վրայ -նոյնիսկ այն ցեղասպանութենէն յետոյ, զոր իրագործած էր իրեն հպատակ հայերուն դէմ՝ որպէսզի ամբողջացնէ իր մութ նպատակները: Այդպիսով Թուրքիա հայկական հողերէն ուրիշ մաս մը եւս գրաւեց:

Պետութիւններու սահմաններուն անհաստատ ըլլալուն մասին խօսիլը զարմանալի է, որովհետեւ պատմութեան ընթացքին անփոփոխ սահմաններ ունեցող պետութիւնները բացառութիւն են և սահմաններու փոփոխական ըլլալը ընդհանուր երեւոյթ է:

Հայաստանի սահմաններուն անհաստատ ըլլալուն մասին խօսելուն առիթով, հարց տանք այս խնդիրը արծարծող մեր ակադեմական դասախօսին, թէ Օսմանեան Թուրքիոյ սահմանները իր երկու մեծ դրացիներուն՝ Պարսկաստանի և Ռուսիոյ հետ քանի անգամ փոփոխութեան ենթարկուած են: Ի՞նչ է թիւը Եւրոպայի, Միջին Արեւելքի և հիւսիսային Աֆրիկէի նախկին օսմանեան նահանգներուն, որոնք իրմէ անկախացան 19-րդ և 20-րդ դարերու ընթացքին:

Այս ուղղությամբ կը բաւէ որ յիշատակենք Յունաստանը, Պուլկարիան, Ռումանիան, Ալպանիան, Սուրիան, Լիբանանը, Պաղեստինը, Եգիպտոսը, Լիպիան, Սէուտական Արաբիան և Կիպրոսը:

Կարծէ նշել թէ 19-րդ դարու ընթացքին և 20-րդ դարու սկիզբը Թուրքիոյ մէջ գտնուող վեց նահանգներուն հայ բնակչութիւնը չէր ձգտեր Օսմանեան Թուրքիայէն անկախանալու, այլ կը նպատակադրէր իր վիճակը բարելաւել: Սակայն Օսմանեան Թուրքիոյ կառավարութեան կողմէ գործադրուած ցեղասպանութեան գործողութիւնները ի վերջոյ մղեցին հայերը համաշխարհային առաջին պատերազմէն վերջ պահանջելու Թուրքիոյ մէջ գտնուող իրենց պատմական հողերը, նման նախապէս վերել յիշուած օսմանեան նահանգներուն, որոնք մէկը միւսին ետեւէն իրենց անկախութիւնը ձեռք բերին:

Սակայն առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ տիրող միջազգային պայմանները դաւաճանեցին հայերուն: Բայց ասիկա երբեք չի նշանակեր թէ իրենց դատը արդար չէ կամ կորսուած է:

Այստեղ կը փափաքինք նաեւ նշել թէ եւրոպական պետութիւններուն մեծամասնութեան սահմանները փոփոխութեան ենթարկուած են: Որպէս օրինակ կրնանք նշել Ֆրանսան, Գերմանիան, Լեհաստանը, Ռւքրանիան և Աւստրեիոնգարիան:

Սահմաններու փոփոխութեան երեւոյթը կը վերաբերի մասնաւորաբար այն պետութիւններուն, որոնք կը գտնուին ցամաքամասերու միջեւ գոյութիւն ունեցող խաչմերուկներու վրայ, որոնցմէ է Հայաստանը, որուն սահմանները մշտապէս անհաստատ եղած էին, կ'ընդարձակուէին և կը կծկուէին ըստ տիրող պատմական պայմաններուն:

Ժամանակի մը կամ ժամանակահատուածի մը ընթացքին ժողովուրդի մը ազատութեան կորուստը չ'արդարացներ իր հողին և իր պատմական հայրենիքին վրայ ունեցած իրաւունքին կորուստը, մանաւանդ եթէ այդ հայրենիքը իր տիրոջմէն խլուած է հաւաքական ցեղասպանութեամբ:

Այնպէս կը թուի թէ ծայրայեղ զգայնութիւնը կամ անբնական ջղագրգռութիւնը, որ կը համակէ թուրք պատասխանատուները (և

անոնց ջատագովները) հազիւ լսեն «հայկական ցեղասպանություն» բառերը, հիմնականին մէջ արդիւնք է իրենց ենթագիտակիցին մէջ անթեղուած այն զգացումին, որ իրենք ապօրինի կերպով կը գտնուին ցեղասպանութեամբ իրենց տէրերէն խլուած հողերու վրայ:

Կրնան գոյություն ունենալ միջազգային քաղաքական սահմաններ և միջազգային ընկերությունը կրնայ զանոնք ճանչցած ըլլալ երկար տասնամեակներէ ի վեր: Սակայն նոյն այդ ընկերությունը երբեք չի կրնար հաստատել որեւէ սահմանի օրինականությունը և անոր տեսականությունը, եթէ ատիկա իրականացած է իբր հետեւանք ցեղասպանութեան:

Հեռու չէ այն օրը, երբ իրականությունը իր ճամբան պիտի գտնէ մտքերուն և էութեան մէջ այն մարդոց, որոնք ներկայիս կը մերժեն ընդունիլ որ Օսմանեան Թուրքիան Հայկական Ցեղասպանությունը գործադրած է, վախնալով այն հետեւանքներէն, որոնք կրնան յառաջ գալ այս ուշացած ճանաչումէն:

Մեր նշումները կը փակենք վերջին կետով մը:

Պատմական իրողություններու թուումը այնպէս ինչպէս որ են «քաղաքականացում» չէ: Սակայն պատմական իրողություններու աղաւաղումը և զանոնք հանրային կարծիքէն պահելը նոյնինքն «քաղաքականացումն» է:

* * *

Արդար ըլլալու համար հարկ է յիշել թէ Կեղրոնին կողմէ աւելի ուշ կազմակերպուած հայագիտական այլ գիտաժողովի մը ընթացքին, երկու եզիպտացի ուսանողներ, որոնք դրդուած էին ազերիներու կողմէ, փորձեցին այդ գիտաժողովը խանգարել Խոջալուի «ցեղասպանութեան» շուրջ հարց բարձրացնելով:

Կեղրոնին տնօրէնուհին անմիջապէս կասեցուց այդ վիճաբանությունը և գիտաժողովը վերադարձուց իր բնական հունին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ՀՀ Գահիրէի ղեսպանութիւնը իր ջերմ ողջոյնները կը յղէ Գահիրէի Համալսարանին - համալսարանի նախագահի գրասենեակին:

Ինչ կը վերաբերի Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին և անոր գործունէութեան սամեցումին, ղեսպանութիւնս պատիւն ունի հետեւեալը տեղեկացնելու.

Գահիրէի Համալսարանին հայագիտական ուսումնասիրութիւններու բաժինը հիմնելու հաւանութիւնը ստացուած է 2005 թուականէն ի վեր, երբ նոյն տարւոյ Յուլիսի 17-ին Գահիրէի Համալսարանին և Երեւանի Պետական Համալսարանին միջեւ գիտական, ուսուցողական և դասաւանդման ծրագիրներու վերաբերեալ ստորագրուած է համագործակցութեան համաձայնագիր, որուն երկրորդ յօդուածը կը նշէ.

... Երեւանի Պետական Համալսարանը պիտի ներկայացնէ հարկ եղած կազմակերպչական, մեթոտական և գիտական աջակցութիւնը Գահիրէի Համալսարանին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու բաժին մը հիմնելու և հոն գիտական ուսումնասիրութիւններ կատարելու համար:

Գահիրէի Համալսարանին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու միաւոր մը ստեղծելու մտադրութեան մասին պաշտօնապէս յայտարարուած է ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի 2005 Դեկտեմբերին Եգիպտոս կատարած այցելութեան ընթացքին, իր և Գահիրէի Համալսարանին նախագահին կողմէ:

13 Ապրիլ 2007-ին ԵԱՀ-ի Միջազգային Համագործակցութեան Նախարարութիւնը - նախարարի գրասենեակ - ղրկած է թիւ 1713 յուշագիրը, որուն մէջ պաշտօնապէս կը նշուի Գահիրէի Համալսարանի բանասիրական բաժանմունքին մէջ հայագիտական ուսումնասիրութիւններու բաժին ստեղծելու մասին և այդ, ՀՀ նախագահին 14-16 Ապրիլ 2007 ԵԱՀ կատարած պաշտօնական այցելութեան ընթացքին: (Կցեալ կը գտնէք յուշագրէն պատճէն մը): Այս պաշտօ-

նական համաձայնության ՀՀ նախագահին այցելության հետ համընկնումը ցոյց կու տայ այն կարեւորութիւնը, զոր հայկական և եգիպտական կողմերը ընծայած են երկու երկիրներու միջեւ երկկողմանի համագործակցության:

8 Յուլիս 2007-ին բարձրագոյն կրթության, գիտական հետազոտության պետական նախարար և համալսարաններու բարձրագոյն խորհուրդի նախագահը թիւ 133 որոշմնագիրը ստորագրեց հայագիտական ուսումնասիրութիւններու կեդրոն մը ստեղծելու մասին, որպէս յատուկ բնոյթ ունեցող միաւոր: (Կցեալ կը գտնէք գրութենէն պատճէն մը):

Կեդրոնը սկսաւ իր գործունէութիւնը 2007 Սեպտեմբերին Կեդրոնի տնօրէնի մը նշանակումով և կազմաւորումովը վարչական խորհուրդի մը, որուն մէջ ՀՀ դեսպանության առաջարկով ընդգրկուեցան երեք անձեր.

- Դոկտ. Մոհամէտ Ռէֆաաթ Էլ Իմամ - պատմության դասախօս Աղեքսանդրիոյ Համալսարանի Տամանիուրի բանասիրական բաժանմունքին մէջ:

- Դոկտ. Վարուժան Գազանճեան - անգլերէն լեզուի դասախօս Թանթայի Համալսարանի բանասիրական բաժանմունքին մէջ:

- Դոկտ. Նայիրի Համբիկեան - ճարտարապետության դասախօսուհի:

Յետագային Դոկտ. Նայիրիի փոխարէն խորհուրդի անդամ նշանակուեցաւ Բժիշկ Արմէն Մազլումեան:

Երկկողմ պայմանաւորութեան համաձայն, Երեւանի Պետական Համալսարանը ՀՀ Գահիրէի դեսպանության միջոցով Կեդրոնի գործունէութեան բերաւ իր մնայուն նիւթական, թեքնիք և գիտական աջակցութիւնը:

Նոյնպէս եգիպտահայ համայնքը, ի դէմս ՀԲԸՄ-ի, ամէն տարի նիւթական աջակցութիւն յատկացուց Կեդրոնին:

Համատեղ ջանքերով 2007-2013 թուականներու ընթացքին հայկական ուսումնասիրութիւններու կեդրոնը իրականացուց հետեւեալը.

- Հայոց լեզուի դասաւանդութիւններ, որոնց հետեւած են համալսարանի եգիպտացի ուսանողներէն զատ նաեւ համալսարան չյաճախողներ:

- Կազմակերպուած և կայացած են հինգ միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցած են գիտնականներ և հետազոտողներ՝ Եգիպտոսէն, Հա-

յաստանէն, Լիբանանէն, Սուրիայէն, ԱՄՆ-էն, Ֆրանսայէն և այլ երկիրներէ:

Գիտաժողովներուն ներկայ գտնուած և մասնակցած են հարիւրաւոր համալսարանական ուսանողներ և տասնեակներով դասախօսական անձնակազմի անդամներ ու փրոֆէսորներ: (Կցեալ կը գտնէք կայացած գիտաժողովներու ցուցակը):

Գիտաժողովները կ'ընդգրկէին մասնաւորաբար հայ-եգիպտական և ընդհանրապէս հայ-արաբական յարաբերութիւններու վերաբերեալ նիւթեր պատմական, մշակութային և տնտեսական տարբեր մարզերէ ներս:

- Գահիրէի Համալսարանին մէջ կազմակերպուեցան պատմութեան և մշակոյթի վերաբերեալ մասնագիտական առանձին դասախօսութիւններ: Նոյնպէս Գահիրէի և Աղեքսանդրիոյ գիտական և ուսումնական այլ հիմնարկներու մէջ կազմակերպուեցան դասախօսութիւններ, ուր ելոյթ ունեցան եգիպտացի, ինչպէս նաեւ արտասահմանէն հրաւիրուած դասախօսներ, ինչպէս Միշիկըն Համալսարանի դասախօս Դոկտ. Գէորգ Պարտաքճեան, Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի փրոֆէսոր Նիքոլայ Յովհաննիսեան, նոյն ակադեմիայի պատմութեան ինստիտուտի գիտաշխատող պատմութեան մասնագէտ Դոկտ. Էդուարդ Դանիէլեան և ուրիշներ:

- Ներկայացուած դասախօսութիւնները տպուեցան և շրջանառութեան մէջ դրուեցան: Նոյնպէս տպուեցան արաբերէն լեզուով գրական այլ հատորներ: (Կցեալ կը գտնէք տպուած գիրքերու ցուցակը):

- Կեդրոնին և բանասիրական բաժանմունքի պատասխանատուներուն համար դէպի Հայաստան այցելութիւններ կազմակերպուեցան փորձի փոխանակման և համատեղ ծրագիրներու քննարկման նպատակով:

- Կեդրոնին գործունէութեան ընդլայնումին ծիրին մէջ, մշակուած է հայկական ճարտարապետութեան վերաբերեալ դասընթացքի մը ծրագիրը, որ հաստատուած է բանասիրական բաժանմունքի խորհուրդէն:

Նոյնպէս պատրաստութեան մէջ էր հայերէնէ արաբերէն և արաբերէնէ հայերէն թարգմանական ծրագիր մը:

Բոլոր թափով աշխատանք կը տարուէր հայերէն գիրքերու և հայկական նիւթեր շօշափող մասնագիտական գիրքերու անկիւն մը ստեղծելու Գահիրէի

Համալսարանի կեղրոնական գրադարանին, ինչպես նաև բանասիրական բաժանմունքի գրադարանին մէջ:

- ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան և Արեւելագիտութեան Ինստիտուտի կեղրոնին հետ գիտահետազոտական համագործակցութիւն հաստատելու նպատակով երկու նախագիծեր ներկայացուած էին, սակայն անոնց ստորագրութիւնը յետաձգուեցաւ:

- Պայմանաւորութիւն կայացած էր որ յաջորդ միջազգային գիտաժողովը գումարուի Հայաստանի մէջ: Այս մասին յայտարարուած էր 5-րդ գիտաժողովի ամփոփիչ զեկոյցին ժամանակ:

- Յիշեալ ծրագիրները չհասան գործադրուելու, քանի որ 2013 Ապրիլի կէսին անակնկալի եկանք Կեղրոնի գործունէութեան սառեցումի որոշումին և զայն յետագային որպէս ենթաբաժին Գահիրէի Համալսարանի արեւելեան ուսումնասիրութիւններու կեղրոնին միացնելու մտադրութեան հետեւանքով:

- ՀՀ Գահիրէի դեսպանը ատենին փորձեց տեղեկանալ այդ որոշումին տուն տուող պատճառին և մեկնաբանութիւններ ստանալ համալսարանի և բանասիրական բաժանմունքի ղեկավարներէն: Տրուած հակիրճ բացատրութիւններէն հետեւցուեցաւ թէ տրուած որոշումին պատճառներէն է Կեղրոնին ձախողութիւնը հանրութեան «ընկերային ծառայութիւններ» մատուցելու հարցին մէջ: Միաժամանակ հաւաստիացում տրուեցաւ թէ Կեղրոնը լուծարման չէ ենթարկուած, այլ իր գործունէութիւնը սառեցուած է մինչեւ իր կառուցուածքային փոփոխութեան իրականացումը:

Այս բոլորը տարակուսանք յառաջացուցին հետեւեալ պատճառներով.

- Կեղրոնը իր վեցամեայ գործունէութեան ընթացքին երբեւիցէ որեւէ իրաւասու մարմնի կողմէ քննադատութեան չէ ենթարկուած: Ընդհակառակը ան մշտապէս բարձր գնահատանքի արժանացած է բոլորէն:

- Կեղրոնին գործունէութեան մասին որեւէ բողոք չէ ներկայացուած Երեւանի Պետական Համալսարանին կամ ՀՀ Գահիրէի դեսպանութեան կամ Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կամ նոյնիսկ ՀՀ դեսպանութեան կողմէ ընտրուած Կեղրոնի վարչական խորհուրդի անդամներուն: Ընդհակառակը, Կեղրոնին գործունէութեան մասին մշտապէս դրական կարծիքներ յայտնուած են համալսարանի եւ բաժանմունքի ղեկավարներուն կողմէ:

- Կեղրոնին գործունեության սառեցման որոշումին մասին պատկան մարմինները պաշտոնապես չեն տեղեկացուցած այդ որոշումը ամենլին առաջ եւ անկէ վերջ: Այս մասին ՀՀ դեսպանը պատահաբար տեղեկացած է ոչ պաշտոնական աղբիւրէ, որոշում ամնուած օրը:

Կը նախընտրէինք որ այս որոշումը ամենլէ առաջ պատկան կողմերը տեղեկ պահուէին թերութիւններուն եւ պակասներուն մասին, եթէ նման պարագաներ գոյութիւն ունէին, եւ աւիթ տրուէր զանոնք ուղղելու:

- Կեղրոնին հովանաւորներուն հետ «Ընկերային ծառայութիւններ» մատուցելու մասին որեւէ քննարկում չէ եղած կամ որեւէ նման պարտաւորութեան մասին չէ խօսուած: Այս ծառայութիւններուն մասին որեւէ յիշատակութիւն չկայ վերոյիշեալ համաձայնութեան մէջ:

- Կեղրոնին համար նախատեսուած դերակատարութեան մասին Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան պաշտոնական յուշագրին մէջ նշուած է հետեւեալը.

Եգիպտական և հայկական կողմերուն միջեւ համաձայնութիւն գոյացած է Գահիրէի Համալսարանի բանասիրական բաժանմունքին մէջ հիմնելու հայագիտական ուսումնասիրութիւններու կեղրոն մը, որ պիտի գործէ որպէս գիտահետազօտական կեղրոն, գիրքեր և զեկուցագրեր հրատարակէ, հայերէն լեզուի դասընթացքներ կազմակերպէ (յուշագիր թիւ 1593, 25 Նոյեմբեր 2007):

- Կեղրոնին պաշտոնական փաստաթուղթերուն մէջ չեն յիշուած այս ուղղութեամբ ակնկալուած պարտաւորութիւնները նոյնպէս, անցնող վեց տարիներու ընթացքին երբեք նման հարց չէ քննարկուած կամ լուսաբանուած Կեղրոնի հովանաւորներուն հետ: Նոյնիսկ չեն բնութագրուած ընկերային այն ծառայութիւնները, որոնք կ'ակնկալուին որ Կեղրոնը գործադրէ:

- Կեղրոնին հիմնադրութիւնը, ինչպէս յիշեցինք, տարիներու ընթացքին կայացաւ իբր հետեւանք եգիպտական և հայկական պաշտոնական իրաւասու մարմիններու միջեւ գործակցութեան և փոխհասկացողութեան: Հետեւաբար, կ'ակնկալուէր որ Կեղրոնին կարգավիճակին և կառուցուածքին մէջ որեւէ փոփոխութիւն կատարուէր փոխադարձ համաձայնութեամբ:

- Հակառակ այս բոլոր վերապահումներուն, ՀՀ դեսպանութիւնը համբերութեամբ կը սպասէ այս խնդրին լուծումին, յարգելով սեփական ներքին կա-

ռուցուածքային խնդիրները տնօրինելու Գահիրէի Համալսարանին անվիճելի իրաւունքը:

- Քանի մը ամիս առաջ, Գահիրէի Համալսարանի փոխ նախագահ Կամալ Ապտէ Նասէր ՀՀ ղեսպանին վերահաստատած է Կեդրոնը Գահիրէի Համալսարանին արեւելեան ուսումնասիրութիւններու կեդրոն փոխադրելու մտադրութիւնը: Սակայն հարցը ցարդ կը մնայ առկախ:

- Վերջերս անակնկալի եկանք լսելով նոր տեսակէտ մը, ըստ որուն կարելի չէ հայկական ուսումնասիրութիւնները ընդգրկել Գահիրէի Համալսարանի արեւելեան ուսումնասիրութիւններու կեդրոնին մէջ, քանի որ Հայաստանը արեւելքի պետութիւններէն չէ, այլ ան կը գտնուի Եւրոպայի մէջ: Այս ուղղութեամբ հարկ է ընդգծել թէ հայագիտութիւնը միշտ եղած է և կը մնայ արեւելեան ուսումնասիրութիւններու անբաժան մասը: Հայ ժողովուրդի հինգ հազարամեայ հնութիւն ունեցող պատմութիւնը, մշակոյթը և լեզուն անվիճելիօրէն կը պատկանին արեւելքի քաղաքակրթութեան: Հայ ժողովուրդի բնօրրանը աշխարհագրականօրէն կը գտնուի արեւմտեան Ասիոյ մէջ: Վերջին քսան տարիներուն Հայաստանի հանրապետութեան անկախութենէն ի վեր, Եւրոպայի հետ համարկուելու անոր կատարած փորձերը չեն նշանակեր իր պատմական, մշակութային և քաղաքակրթական կարգավիճակի փոփոխութիւն: Հայագիտութիւնը որպէս ինքնուրոյն գիտութիւն 19-րդ դարէն սկսած է զարգանալ շնորհիւ համաշխարհային հռչակ ունեցող արեւելագէտներու ինչպիսիք են՝ Մ. Պրոսէ, Ե. Հիւպշման, Ն. Մառ և ուրիշներ: Աշխարհի առաջատար տասնեակ համալսարաններու և գիտական կեդրոններու հայագիտական ամպիոններն ու ծրագրերը ներառուած են արեւելագիտութեան կամ Մերձաւոր Արեւելքի ստորաբաժնումներուն մէջ, ինչ որ անգամ մը եւս կ'ապացուցէ հայագիտութեան արեւելեան ուսումնասիրութիւններու բնագաւառին պատկանիլը (այդպիսի հաստատութիւններու ոչ ամբողջական ցուցակը կցուած է):

- Հայկական կողմը Կեդրոնը բացառապէս կը դիտարկէ որպէս հայ-եգիպտական բարեկամական յարաբերութիւններն աւելի ամրապնդելու, երկու ժողովուրդները իրարու մօտեցնելու, իրարու մշակոյթներուն և քաղաքակրթական արժէքներուն ծանօթացնելու բացարձակապէս ապաքաղաքական գերազանց լծակ մը: Կեդրոնը իր գործունէութեան կարճ ժամանակահատուածին ընթացքին վերածուած է հայ-եգիպտական աւանդական բարեկամութեան խորհրդանիշի և կը համարուի երկկողմանի համագործակցութեան ամենայայտնի էջերէն մէկը:

- Հայաստանի Հանրապետության դեսպանությունը ունի այն տեսակետը, որ Կեղրոնի գործունեության շարունակությունը մեծ ներդրում պիտի ապահովէ հայ-եգիպտական գիտական, կրթական և մշակութային համագործակցության: Այդ համոզումով ՀՀ դեսպանությունը Գահիրեի Համալսարանի տնօրէնութենէն կը խնդրէ որ քննարկէ Կեղրոնի հարցը, որպէսզի հնարաւոր ըլլայ առկախ մնացած ծրագիրներու ամբողջացումը:

- Միաժամանակ ՀՀ դեսպանությունը իր պատրաստակամությունը կը յայտնէ ընդունելու Գահիրեի Համալսարանին կողմէ Կեղրոնին վերաբերեալ առաջարկները և ցուցմունքները, նպատակ ունենալով բարելաւել անոր գործունեությունը և անվերապահօրէն շարունակելով իր աջակցությունը:

ՀՀ Գահիրեի դեսպանությունը այս առիթէն օգտուելով կ'արտայայտէ իր բարձր գնահատանքը Գահիրեի Համալսարանի - նախագահի գրասենեակին:

Գահիրէ, 25 Յունիս 2014

Գահիրեի Համալսարան
Նախագահի գրասենեակ

Ցանկ միջազգային համաժողովներու

- Հայ-արաբական յարաբերութիւնները անցեալին եւ այսօր: 29 Ապրիլ 2008
- Հայ-արաբական մշակութային յարաբերութիւնները: 16 Մարտ 2009
- Տնտեսութիւն հայերու եւ արաբներու միջեւ: 15 Մարտ 2009
- Հայաստանի կերպարը դարերու ընթացքին արեւելեան եւ արեւմտեան աղբիւրներու մէջ: 14 եւ 15 Նոյեմբեր 2011
- Հայաստան եւ քաղաքակրթութիւններու խօսակցութիւն, հինգ դարեայ տպագրական ներդրում: 25 Փետրուար 2013

Ցանկ հայագիտական ուսումնասիրութիւններու միատրոներու համաշխարհային գիտական եւ ուսուցողական հիմնարկներու մէջ

Harvard University, Armenian Studies program as part of Near Eastern Languages and Civilizations in the Center for Middle Eastern Studies.

Oxford University, Armenian Studies as part of Eastern Christianity Department in the Faculty of Oriental Studies.

UCLA (University of California, Los Angeles), Armenian Studies included in Near Eastern Languages and Cultures Department.

The University of Chicago, Armenian Studies in the Center for Middle Eastern Studies.

Columbia University, The Armenian Language program as part of the Department of Middle Eastern and Asian Languages and Cultures.

Université Catholique de Louvain, Armenian Studies in Institut Orientaliste.

Martin Luther Universität Halle-Wittenberg, Armenian Studies as part of Institut für Orientalistik.

Institut national des langues et civilisations orientales, the Armenian language included.

Ցանկ հրատարակուած գիրքերու

1. «Հայերը, Արեւմուտքը եւ մահմետականութիւնը, ոճրագործներ, զոհեր եւ ամբաստանեալներ» Տոքթ. Մոհամէտ Ռիֆաաթ Էլ Իմամ, Գահիրէի Համալսարան, բանասիրական բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոն, 2008, 164 էջ:

2. «Հայ-արաբական պատմական յարաբերութիւններ», հեղինակ հայ պատմաբան Նիքոլայ Յովհաննիսեան, թարգմանութիւն Տոքթ. Մոհամէտ Ռիֆաաթ Էլ Իմամ, Գահիրէի Համալսարան, բանասիրական բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոն, 2008, 52 էջ:

3. «Նուպար փաշան պատմութեան ընդառաջ» հեղինակ Ալեքսանտր Յովինսքի, թարգմանութիւն Կարօ Թապաքեան, վերանայում Տոքթ. Մոհամէտ Ռիֆաաթ Էլ Իմամ, Գահիրէի Համալսարան, բանասիրական բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոն, 2009, 132 էջ:

4. «Մոհամէտ Ալի փաշայի պատմութիւնը», հեղինակ հայագի Իսքան-

տար Պըն Եագուպ Ադա Ապգարիու, ստուգում՝ Ահմէտ Ապտէլ Մոնէմ Ատաուի, վերանայում եւ ներկայացում՝ Դոկտ. Ռաուֆ Ապպաս, Գահիրէի Համալսարան, Բանասիրական Բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոն, 2009, 206 էջ:

5. «Հայ-արաբական յարաբերութիւնները, անցեալին եւ ներկայիս», ներկայացում եւ խմբագրութիւն Տոքթ. Մոհամէտ Ռիֆաաթ Էլ Իմամ, Գահիրէի Համալսարան, Բանասիրական Բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոն, 2009, 186 էջ:

6. «Միջազգային ասուլիս հայ-արաբական մշակութային յարաբերութիւններուն մասին» բանասիրական Բաժանմունք, Գահիրէի Համալսարան 16 Մարտ 2009 համաժողովներու սրահին մէջ, գլխաւորութեամբ Տոքթ. Զէյնապ Ապու Սէննայի, Գահիրէի Համալսարան, Բանասիրական Բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոն, 2009, 339 էջ:

7. «Անգլիան եւ հայերը 1839-1904» հեղինակ Ս. Կրաֆինհակ Մ. Վան Տէր Պիիքս Հուֆայուքանտլ 1918, թարգմանութիւն Կարօ Թապաքեան, Գահիրէի Համալսարան, Բանասիրական Բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոն, 2009, 135 էջ:

8. «Միջազգային գիտական ասուլիս արաբներու եւ հայերու տնտեսութեան մասին», Բանասիրական Բաժանմունք, Գահիրէի Համալսարան, 29 Մարտ 2010 համաժողովներու սրահին մէջ, գլխաւորութեամբ Տոքթ. Զէյնապ Ապու Սէննայի, Գահիրէի Համալսարան, Բանասիրական Բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոն, 2010, 232 էջ:

9. «Իրանահայեր», հեղինակ Անդրանիկ Հովիւեան, թարգմանութիւն Տոքթ. Մոնա Մուսթաֆա Մոհամէտ Եուսէֆ, ստուգում Տոքթ. Ապտէլ Հաֆիզ Եագուպ Հէկապ, Գահիրէի Համալսարան, Բանասիրական Բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոն, 2011, 434 էջ:

10. «Հայաստանի կերպարը արաբական եւ օտար աղբիւրներու մէջ», ներկայացում Տոքթ. Մոհամէտ Ալաուի, ստուգում եւ խմբագրում Տոքթ. Մոհամէտ Ռիֆաաթ Էլ Իմամ, Գահիրէի Համալսարան, Բանասիրական Բաժանմունք, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոն, 2012, 254 էջ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՒՆ

Գահիրեի Համալսարանի վարչական խորհուրդը Տոքթ. Կապեր Նասսարի գլխավորությամբ իր հաւանութիւնը յայտնած է հայկական ուսումնասիրութիւններու կեղրոն մը հիմնելու մասին, որպէսզի կատարէ հայերու վերաբերեալ պատմական և մշակութային բոլոր ուսումնասիրութիւնները, անկախաբար այն դերէն, զոր պիտի ունենայ Եգիպտոսի և Հայաստանի միջեւ մշակութային յարաբերութիւնները սերտացնելու մէջ:

Այս մասին յայտարարութիւն կատարեց Գահիրեի Համալսարանի նախագահ Տոքթ. Կապեր Նասսար: Ան նշեց թէ այս կեղրոնը նախաքայլը պիտի ըլլայ համալսարանին մէջ հայկական ուսումնասիրութիւններու գիտական բաժին մը հիմնելու ուղղութեամբ:

Բանասիրական բաժանմունքին մէջ Կեղրոնին բացումին առիթով պիտի հրաւիրուին Հայաստանի պետութեան, ՀՀ Գահիրեի դեսպանատան և եգիպտահայ համայնքի պատասխանատուները:

Նշելի է, որ Եգիպտոս առաջին պետութիւններէն է որ ճանչցած է Հայաստանի անկախութիւնը երբ ան կ'անկախանար Խորհրդային Միութենէն:

Դիւանագիտական յարաբերութիւններու ստեղծումին համաձայնագիրը ստորագրուած է 1992-ին: Եգիպտական դեսպանութիւնը Երեւանի մէջ բացուած է Մայիս 1993-ին մինչ հայկական դեսպանութիւնը Գահիրեի մէջ բացուած է 1992-ին:

Եգիպտահայ համայնքին արմատները կ'երկարին պատմութեան խորերը: Արդարեւ, Եգիպտոս հին արեւելքի երկիրներէն է և աշխոյժ յարաբերութիւններ մշակած է Հայաստանի հին բնակիչներուն հետ փարաւոնական պետութեան շրջանին:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԱՍԻՆ

Ընթերցողը, կարդալի յետոյ ՀՀ-ի Եզիպտոսի դեսպան դոկտ. Արմեն Մելքոնեանի Գահիրեի Համալսարանի նախագահին ուղղած 25 Յունիս 2014 թուակիր յուշագիրը, եւ Գահիրեի Համալսարանին 2014 Հոկտեմբերի վերջերը համացանցին վրայ դրուած անթուակիր յայտարարութիւնը, որ կը վերաբերի Գահիրեի Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի բացումին, պիտի անդրադառնայ որ ՀՀ-ի Գահիրեի դեսպանը, իր ներկայացուցած յուշագրին հետ առած վարչական քայլերուն կողքին, վստահօրէն գործածած է նաեւ դիւանագիտական լծակներ:

Նկատելի է որ համալսարանին յայտարարութիւնը չի խօսիր նախապէս 2007-էն ի վեր գործող հայագիտական կեդրոնին մասին, որուն գործունէութիւնը 2013-ի Ապրիլի կէսին համալսարանին կողմէ սառեցուած էր, եւ նոր յայտարարութեան մէջ կ'ուզէ շեշտել թէ հայագիտական նոր կեդրոն մը բացուած է:

Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը երբ 2007-ին սկսաւ իր գործունէութեան, իրեն յատկացուած էր յատուկ գրասենեակ մը բանասիրական բաժանմունքի առաջին յարկին վրայ:

Կեդրոնին գործունէութեան սառեցումին առիթով այդ գրասենեակը առնուած եւ այլ նպատակի համար գործածուած էր:

Կեդրոնը երկար ժամանակ փակ մնալէ ետք, երբ վերսկսաւ իր գործունէութեան, համալսարանը անոր յատկացուց նոր գրասենեակ մը, բաժանմունքէն ոչ շատ հեռու, արեւելեան լեզուներու յատուկ համալիրին մէջ:

Վերոնշեալ յայտարարութենէն վերջ, Գահիրեի Համալսարանի բանասիրական բաժանմունքի տնօրէնը 2014-ի Նոյեմբերին հանդիպումի մը հրաւիրեց հայկական կողմէն ՀՀ-ի Եզիպտոսի դեսպան

դոկտ. Արմեն Մելքոնեանը, Գահիրեի Քաղաքական ժողովի օրուան ատենապետ Տիար Օննիկ Պըլըքտանեանը, ինչպէս նաեւ տողերս ստորագրողը՝ որպէս ՀԲԸՄ-ի ներկայացուցիչ:

Այդ հանդիպումին ընթացքին տնօրէնը պատգամներ տուաւ Կեղրոնէն սպասուած գործունէութեան մասին եւ շեշտեց որ, եթէ հայկական կեղրոնը չունենայ աշխոյժ եւ ժրաջան գործունէութիւն, պիտի փակէ զայն:

Վերաբացուող Կեղրոնը չէր կրնար գործել առանց տնօրէնի մը նշանակումին: Այդ նշանակումը «աճապարանօք» տեղի ունեցաւ 12 Փետրուար 2015 թուականին եւ տնօրէնի պաշտօնին կոչուեցաւ ասորագէտ դոկտ. Սալահ Մահկուպ:

Կեղրոնը իր գործունէութեան նոր հանգրուանին սկիզբը կը ծրագրէր տարեկան աւանդական հայագիտական համագումարը կազմակերպել նոյն տարուան Հոկտեմբերին, սակայն այդ շրջանին համալսարանին մէջ այլ ձեռնարկներու առկայութիւնը արգելք հանդիսացաւ համագումարը կազմակերպելու:

Հետեւաբար, Կեղրոնին նոր շրջանին առաջին համագումարը տեղի ունեցաւ 18 եւ 19 Հոկտեմբեր 2016-ին, նիւթ ունենալով «Հայագիտական Ուսումնասիրութիւնները Արաբական Աշխարհին Մէջ»:

Այս համագումարին մասնակցեցաւ 26 հոգի: Նկատելի է որ ներկայացուած կարգ մը նիւթեր անմիջական առնչութիւն չունէին հայագիտութեան հետ:

Կեղրոնին յաջորդական երեք տնօրէնները տարբեր մասնագիտութիւններ ունէին:

Առաջին տնօրէնը (Դոկտ, Զէյնապ Ապու Սեննա) թրքագէտ էր, երկրորդը (Դոկտ. Մահմուտ Մալամա Ալլաուի)՝ պարսկագէտ, իսկ ներկայ տնօրէնը (Դոկտ. Սալահ Ապտէլազիզ Մահկուպ Իտրիս)՝ ասորագէտ:

Վերջին երկու տնօրէնները միշտ կը ջանային որ Կեղրոնին հրատարակելի նիւթերը կապ ունենան իրենց մասնագիտութեան հետ:

Կեղրոնին վարչական խորհուրդը ընդհանրապես կազմուած է տասը անդամներէ, որոնք բոլորն ալ համալսարանին կողմէ նշանակուած են, ներառեալ երեք կամ չորս անդամներ, որոնց թեկնածութիւնը կ'առաջարկուի հայկական կողմէն:

Այս կացութեան մէջ կը ստեղծուի զարմանալի իրավիճակ մը. արդարեւ, Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոնին տնօրէնը հայագէտ չէ, որովհետեւ Կեղրոնին վարչական խորհուրդի անդամները, մա՛նաւանդ տնօրէնը, պարտին համալսարանի անձնակազմէն ըլլալ:

Այս գոյավիճակը անպատեհութիւններ կը ստեղծէ, քանի որ որեւէ հակակշիռ չկայ Կեղրոնին հրատարակութիւններուն բովանդակութեան վրայ: Բացառութիւն են թերեւս այն գիրքերը, որոնք կրնան հրատարակուիլ Կեղրոնին անունով, պայմանաւ որ տպագրութեան պիտճէն յատկացնողը իրաւունք ունենայ բովանդակութեան ծանօթանալու, նախքան անոնց տպագրութիւնը:

Բնականոն պայմաններու մէջ Կեղրոնին կողմէ հրատարակուելիք որեւէ գիրք պարտէր անցնիլ Կեղրոնի վարչական խորհուրդին բովէն: Գիրքը կա՛մ կը քննարկուի վարչական խորհուրդին կողմէ, կա՛մ ալ կը յանձնուի վարչական խորհուրդին կողմէ նշանակուած յանձնախումբի մը, որ տայ իր գնահատումը:

Սակայն գործնականին մէջ Կեղրոնին վարչական խորհուրդը հազուադէպօրէն ժողով կը գումարէ: Վարչական խորհուրդին նախագահն է համալսարանի բանասիրական բաժանմունքի տնօրէնը, որ նոյն ատեն կը նախագահէ համալսարանի ծիրէն ներս գործող քանի մը տասնեակ այլ կեղրոններու վարչական խորհուրդներուն, ինչ որ կը բացատրէ Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոնի խորհուրդին հազուադէպ գումարումը:

Տուեալ պայմաններուն մէջ, Կեղրոնին տնօրէնը յաճախ Կեղրոնին վարչական խորհուրդին նախագահին ցուցմունքով է որ կ'առնէ հարկ եղած որոշումները:

Մեր դիտարկումներու աւարտին կ'ուզէինք լուսաբանութեան կարօտ կարգ մը երեւոյթներու անդրադառնալ: Ինչպէս տեսանք,

Հայագիտական Ուսումնասիրություններու Կեղրոն մը հաստատելու գաղափարը պետական աւագանիին կողմէ՝ վարչապետ, նախարարներ, համալսարանի նախագահ, սիրալիր եւ բարեացակամ մօտեցումի արժանացած է:

Այսուհանդերձ, Կեղրոնին հաստատումի աշխատանքները տեւեցին ամբողջ ութ տարի:

Այս պարագան կը յուշէ թէ պետական աւագանիին յաջորդող երկրորդ կարգի պաշտօնատարներուն մէջ գոյութիւն ունէին տարրեր, որոնք կը խոչընդոտէին վերնախաւէն եկած հրահանգներու գործադրութիւնը:

Ասկէ զատ, եթէ քննարկենք Կեղրոնին գործունէութեան սառեցումին եւ ապա անոր գործունէութեան վերսկսումին թուականներուն միջեւ եղող ժամանակահատուածը, պիտի նկատենք թէ ան կը համընկնի երկրին մէջ կառավարութեան գլուխը եկած ծայրայեղականներուն իշխանութեան ժամանակահատուածին - երբ ակնյայտ էր թրքական ազդեցութիւնը -մինչեւ կառավարութենէն իրենց հեռացումը:

Կը մաղթենք որ Կեղրոնը այլեւս նման իրավիճակներու մէջ չգրտնուի եւ կարենայ բնականոն կերպով շարունակել իր առաքելութիւնը:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱԲԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԿԵԴՐՈՆԷՆ ՆԵՐՍ

Գահիրեի Համալսարանի Հայագիտական Ուսումնասիրություններու Կեղրոնին մէջ ցարդ հայոց լեզուն դասաւանդած են երկու անձեր, որոնք նոյն ատեն բանաստեղծներ են:

Առաջինը, որ նաեւ թատերագիր է, բնիկ եգիպտահայ Դոկտ. Վարուժան Գազանճեան, շրջանաւարտ է Էյն Շամս Համալսարանի գրականութեան բաժանմունքին անգլիական բաժինէն, ապա անգլերէն լեզուի դասախօս նշանակուած է Թանթայի Պետական Համալսարանին մէջ, ուր նաեւ պաշտպանած է իր դոկտորականը:

Ան չորս տարեշրջան՝ 2009-էն 2013՝ մինչեւ Կեղրոնին գործունէութեան ստեղծումի թուականը, դասաւանդած է տարեկան 120 ժամ, իւրաքանչիւր կիսամեակ 60 ժամ, շաբաթական 2 դասապահ, իւրաքանչիւր դասապահ 3 ժամ: Ուսանողութեան թիւը սկիզբը եղած է 3, քարձրացած է 10-ի, յետոյ նուազած՝ 5-ի:

Յետագային, երբ Կեղրոնը վերաբացուեցաւ, Դոկտ. Գազանճեան առողջական պատճառներով դադրեցաւ Կեղրոնին մէջ դասաւանդելէ:

Երկրորդը՝ Տիկին Մարուշ Երամեան, որ նաեւ սուրիահայ գրող է Հալէպէն, Սուրիոյ մէջ ծայր առած ռազմական գործողութիւններուն հետեւանքով հաստատուած է Երեւան, ուրկէ երկու տարի առաջ Գահիրէ հրաւիրուած է Հելիոպոլսոյ Գալուստեան-Նուպարեան Վարժարանին մէջ ստանձնելու հայագիտական նիւթերու դասաւանդումին վերահսկողութիւնը:

Ան իր դոկտորականը ստացած է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան Ինստիտուտէն եւ ցարդ դասաւանդած է երկու տարեշրջան: Առաջին ամիսներուն ներկայ եղած են 10 ուսանողներ, որոնցմէ 4-ը մագիստրականի թեկնածուներ, ընդհանրապէս արեւելեան լեզուներու մասնագիտութեամբ:

Սակայն, անոնց թիւը նուազած է հասնելով 4-ի, որոնք 2015-2016 տարեշրջանին կանոնաւոր կերպով հետեւած են հայոց լեզուի դասընթացքներուն: Երկրորդ տարին՝ 2016-2017 տարեշրջանին մնացած են միայն երկու ուսանողներ (մին կանոնաւոր, միւսը՝ անկանոն):

Դասընթացքները տեղի կունենային շաբաթը մէկ անգամ, երկու ժամերու ընթացքին:

Այս դասաւանդութիւններուն համար ի չգոյէ յատուկ ծրագրի, դասախօսները նիւթը կը դասաւանդեն ըստ իրենց հայեցողութեան:

Նոյնպէս երկու դասախօսներն ալ լեզուն դասաւանդած են արեւմրտահայերէնով եւ դասական ուղղագրութեամբ: Որպէս սովորականէն դուրս երեւոյթ, այս առթիւ կարժէ հպանցիկ կերպով անդրադառնալ Տիկին Երամեանի որդեգրած դասաւանդումի մեթոտին:

Ըստ իր կողմէ տրուած լուսաբանութեան, արաբերէն արմատներով հայերէն բառերու առատութիւնը յուշած է որ կարելի է այդ կէտէն սկսիլ դասաւանդումը, փոխանակ այբուբենով սկսելու:

Այլ խօսքով՝ սկսիլ ծանօթ բառերէ, եւ անոնց միջոցով սորվեցնել տառերը: Օրինակ

«Արտ» բառը արաբերէնի մէջ ալ նոյն իմաստը ունի: Այս երեք տառ ունեցող բառով կարելի է սորվիլ «ա», «ր», եւ «տ» տառերը:

Ներկայ գրութեան նեղ սահմաններուն մէջ դժուար է Տիկին Երամեանի տուած բացատրութիւններուն ամբողջութիւնը ներկայացնել:

Յամենայնդէպս, եղածը հետաքրքրական նախաձեռնութիւն մըն է, որ եթէ մշակուի եւ իր լրումին հասնի, արաբ ուսանողներուն կողմէ հայոց լեզուն կրնայ աւելի արագ ընկալուիլ:

Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին հիմնական պարտականութիւններէն է հայոց լեզուի դասաւանդումը:

Կեդրոնին հիմնադրութիւնը արդիւնք է ԵԱՀ-ի եւ ՀՀ-ի կառավարութիւններուն միջեւ կայացած համաձայնութեան, հետեւաբար հայոց լեզուի դասաւանդութեան ծրագիրը հարկ է որ մշակուի եւ Կեդրոնին ղրկուի հայրենիքի պատկան մարմիններուն կողմէ:

Այս պարագային հարց կը ծագի թե՛ հայոց լեզուն արեւմտահայերէնով, թե՛ արեւելահայերէնով պէտք է դասաւանդել, եւ նոյնատեն դասակա՞ն, թե՛ արեղեանական ուղղագրութիւնը գործածել:

Անշուշտ հաշուի պէտք է առնել որ Կեղրոնին մէջ հայոց լեզուն դասաւանդելիք ուսուցիչը ուսանողութեան հետ հաղորդակցելու համար պարտի տիրապետել արաբերէն լեզուին:

Լեզուական հարցէն զատ գոյութիւն ունի ուսանողութեան թիւին հարցը:

Փորձը ցոյց տուաւ թե՛ դասընթացքները 10 ուսանողներով սկսելէ յետոյ, ուսանողներուն թիւը հետզհետէ պակսելով հասած է երկուքի:

Այս երեւոյթը փոխելու համար հարկ է հայոց լեզուի դասաւանդութեան հետեւող ուսանողներուն համար ստեղծել մղօններ (մղիչ ազդակներ), որպէսզի աւելի մեծ թիւով ուսանողներ հետեւին դասընթացքներուն: Այսպէս, հայրենի պետութիւնը կրնայ յաջողագոյն ուսանողներուն ամէն տարի տասնօրեայ պտոյտով մը հիւրընկալել հայրենիքի մէջ, կամ մտածել քաջալերանքի այլ ձեւերու մասին:

Այս բոլորին կողքին, երբեք մտահան պէտք չէ ընել թե՛ եգիպտահայ համայնքը (Գահիրէի Ազգային Առաջնորդարան եւ ՀԲԸՄ) պատրաստ է այս ծրագրին պիտոճէին սատարելու, ինչպէս որ եղաւ անցնող տասնամեակին:

Յստակ է որ արաբական մշակոյթի կարեւոր ուստաններէն Գահիրէի մէջ Հայագիտական Ուսումնասիրութիւններու Կեղրոնը պահելը, գիտական նպատակներ հետապնդելու կողքին, կարեւոր է հայկական ներկայութիւնը զգալի դարձնելու առումով ալ եգիպտական ակադեմական շրջանակներէն ներս:

Այս հարցին առաջնահերթութիւնը կամ կարեւորութիւնը որոշելը կը մնայ հայրենի պետութեան:

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳԻՐՔԵՐԸ ԵՒ ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

2008	ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՅԵԱՑՔՆԵՐ Պատմության, Քաղաքականության եւ Մշակութային Ժառանգության Մասին (արաբերեն)	308 էջ
2009	Ինչպե՞ս Տօնուեցաւ Հայ Պարբերական Մամուլի 200-ամեակը Գահիրէի Մէջ	24 էջ
2010	Անտեղի Պատիւի Մը Շոյալումին Առիթով	12 էջ
2010	ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ - Յօդուածներու Ժողովածոյ	316 էջ
2011	Տեղեկագիր Գալուստեան Եւ Նուպարեան Վարժարաններու 1989-ին Վաւերացուած Կանոնագիրներուն Մասին	24 էջ
2012	Գահիրէի ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չագըր Հիմնադրամի Հրատարակչական Գործունէութիւնը	44 էջ
2012	ՀՀ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԾՆՆԴՈՅԸ - Ակնարկ 20-ամեայ Հեռաւորութենէ	92 էջ
2014	Սալիտակի երկրաշարժը, Եգիպտոսի ՀԲԸՄ-ը Եւ Եգիպտոսի համայնքը (համահեղինակ Արաքսի Տէօվլէթեան)	32 էջ
2014	«ԱՐԵԻ»Ի ԱՐԱԲԵՐԷՆ ԱՄՍՕՐԵԱՅ ՅԱԻԵԼՈՒԱԾԸ	132 էջ
2014	ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՈՐ ԱՆԿ Է	60 էջ
2015	Սրտցաւ Կոչ հայոց լեզուին համար	40 էջ
2016	Տիգրան Պապիկեան (Համադրում)	64 էջ

المحرر : بيرج ترزيان

الكتاب : مركز الدراسات الارمنية فى جامعة القاهرة

الناشر : المؤلف

الطبعة : الأولى ٢٠١٧

المطبعة : المطبعة الافريقية ش.م.م

رقم الايداع : ٢٠١٧/٢٥٧٣٨

الترقيم الدولى : 978-977-90-5114-7

Berdj Terzian

**ARMENIAN STUDIES CENTER
at CAIRO UNIVERSITY**

Printed by
AFRICAN PRESS S.A.E.

Cairo 2017

africanpress@hotmail.com

